Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի 2014-2015 ուսումնական տարվա գիտական խորհրդի ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

23.09.2014թ. N 1 նիստի

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. 2014-2015 ուսումնական տարվա գիտական խորհրդի աշխատանքային պլանի հաստատում:
2. 2014-2015 ուս.տարվա մագիստրատուրայի ընդունելության արդյունքների ամփոփում /Զեկ. Բ. Մարգարյան/:
3. 2014-2015 ուս.տարվա ԵՊԼՀ-ի բակալավրիատի ընդունելության արդյունքների ամփոփում /Զեկ. Ռ. Գևորգյան/:
4. Արտադրական և մանկավարժական պրակտիկայի արդյունքների ամփոփում /Զեկ. Ա. Եղիազարյան/:
5. «ԵՊԼՀ-ի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգ»-ի վերահաստատում /Զեկ. Ց. Ակոպյան/:
6. ՈԱԿ-ի 2013-2014 ուսումնական տարվա հաշվետվություն /Զեկ. Ռ. Խաչատրյան/:
7. Ընթացիկ հարցեր:

*****

Լսելով և քննարկելով 2014-2015 ուսումնական տարվա գիտական խորհրդի աշխատանքային պլանի հաստատման վերաբերյալ հարցը՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել 2014-2015 ուսումնական տարվա գիտական խորհրդի տարեկան աշխատանքային պլանը:

*****

Լսելով և քննարկելով ուսումնական գծով պրոռեկտոր Բ. Մարգարյանի հաղորդումը 2014-2015 ուսումնական տարվա մագիստրատուրայի ընդունելության արդյունքների ամփոփման վերաբերյալ հարցը՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Ընդունել ի գիտություն ուսումնական գծով պրոռեկտոր Բ. Մարգարյանի հաղորդումը 2014-2015 ուսումնական տարվա մագիստրատուրայի ընդունելության արդյունքների ամփոփման վերաբերյալ:

*****

Լսելով և քննարկելով ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղար Ռ. Գևորգյանի հաղորդումը ԵՊԼՀ-ի 2014-2015 ուսումնական տարվա

բակալավրիատի ընդունելության արդյունքների ամփոփման վերաբերյալ՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Ընդունել ի գիտություն ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղար Ռ. Գևորգյանի հաղորդումը ԵՊԼՀ-ի 2014-2015 ուսումնական տարվա բակալավրիատի ընդունելության արդյունքների ամփոփման վերաբերյալ:

*****

Լսելով և քննարկելով ուսումնական գործընթացի կազմակերպման և համակարգման բաժնի ղեկավարի ժ/պ Ա. Եղիազարյանի հաղորդումը ԵՊԼՀ-ի 2013-2014 ուսումնական տարվա արտադրական և մանկավարժական պրակտիկայի արդյունքների վերաբերյալ՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Ի գիտություն ընդունել ուսումնական գործընթացի կազմակերպման և համակարգման բաժնի ղեկավարի ժ/պ Ա. Եղիազարյանի հաշվետվությունը:
2. 2013-2014 ուսումնական տարվա արտադրական և մանկավարժական պրակտիկայի արդյունքները գնահատել բավարար:
3. Արտադրական և մանկավարժական պրակտիկայի կազմակերպումն ու իրականացումն առավել արդյունավետ դարձնելու նպատակով

Հանձնարարել՝

- Մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնին առավելագույնս ընդլայնել համագործակցությունը մայրաքաղաքի և մարզերի դպրոցների հետ կանոնավոր հանդիպումների, օլիմպիադաների, ցուցահանդեսների, սեմինարների և կոնֆերանսների կազմակերպման միջոցով, ինչը հնարավորինս կնպաստի մանկավարժական պրակտիկայի գործընթացի արդյունավետության բարձրացմանը:
- Մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի, լեզվաբանության և հաղորդակցման տեսության, անգլերենի հաղորդակցման և թարգմանության, ֆրանսերենի, գերմաներենի, ռուսաց և սլավոնական լեզվաբանության, ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդու իրավունքների, ժողովրդավարության և եվրոպագիտության, կրթության կառավարման և պլանավորման, համաշխարհային գրականության և մշակույթի ամբիոններին, «Միջազգային լրագրություն», «Միջազգային տուրիզմ», տեղեկատվության և հանրային հաղորդակցման տեխնոլոգիաների ԳՈՒ կենտրոններին իրենց հաշվետվությունների մեջ ներառել SWOT վերլուծություն, ինչը հնարավորություն կտա վերհանել գործընթացի ուժեղ և թույլ կողմերը՝ հնարավոր դարձնելով հետագա դրական զարգացումներն ու բարելավումները և առավելագույնս կարտացոլի ուսանողի աշխատանքի առավելություններն ու թերությունները :
- Մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի, լեզվաբանության և հաղորդակցման տեսության, անգլերենի հաղորդակցման և թարգմանության, ֆրանսերենի, գերմաներենի, ռուսաց և սլավոնական լեզվաբանության, ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդու իրավունքների, ժողովրդավարության և եվրոպագիտության, կրթության կառավարման և պլանավորման,

համաշխարհային գրականության և մշակույթի ամբիոններին, «Միջազգային լրագրություն», «Միջազգային տուրիզմ», տեղեկատվության և հանրային հաղորդակցման տեխնոլոգիաների ԳՈՒ կենտրոններին ԳՈՒ կենտրոններին մշակել ուսանող-ղեկավար արդյունավետ համագործակցության մեխանիզմներ:

- Ֆակուլտետներին մշակել մեխանիզմներ՝ վերահսկելու այն ուսանողների պրակտիկայի կազմակերպումն ու անցկացումը, որոնք իրենց նախաձեռնությամբ են ընտրել պրակտիկայի անցկացման վայրը:
- Իրավաբանական բաժնին վերախմբագրել արտադրական և մանկավարժական պրակտիկայի պայմանագրերը:
- Ուսումնական մասին վերամշակել և գիտական խորհրդի քննարկմանը ներկայացնել ԵՊԼՀ արտադրական և մանկավարժական պրակտիկայի կազմակերպման և անցկացման կարգը:

Սույն որոշման կատարման պատասխանատվությունը դնել ամբիոնների, իսկ որոշման կատարման հսկողությունը՝ ուսումնական գծով պրոռեկտոր Բ.Մարգարյանի վրա:

*****

Լսելով և քննարկելով ուսանողության, երիտասարդության և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր Ց. Ակոպյանի հաղորդումը «ԵՊԼՀ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգ»-ի վերահաստատման մասին՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Վերահաստատել «ԵՊԼՀ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգ»-ը:

*****

Լսելով և քննարկելով ՈԱԿ-ի ղեկավար Ռ. Խաչատրյանի հաղորդումը ՈԱԿ-ի 2013-2014 ուսումնական տարվա հաշվետվության վերաբերյալ՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

1. Ի գիտություն ընդունել ՈԱԿ-ի ղեկավար Ռ. Խաչատրյանի 2013-2014 ուսումնական տարվա հաշվետվությունը:
2. Բոլոր էական առումներով ՈԱԿ-ին հաջողվել է իրագործել 2013-2014 ուսումնական տարվա համար նախատեսված ծրագրային խնդիրները և ՈԱԿ-ի 2013-2014 ուսումնական տարվա գործունեությունը գնահատել բավարար:
3. Հանձնարարել.

3.1 Մինչև ս.թ. հոկտեմբերի 15-ը ՈԱԿ-ին մշակել 2014-2015 ուսումնական տարվա գործողությունների պլան և ներկայացնել ԵՊԼՀ ռեկտորատի քննարկման:

3.2 Մինչև ս.թ. նոյեմբերի 15 -ը ՈԱԿ-ին կազմակերպել հանդիպում քննարկումներ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի, գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտորի, ուսանողության, երիտասարդության և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտորի, ֆակուլտետների դեկանների հետ ԵՊԼՀ-ի գործունեության և ռազմավարական ուղղությունների գնահատման առանցքային ցուցանիշների (ԳԱԱՑ) վերաբերյալ:

3.3 Մինչև ս.թ. դեկտեմբերի 1-ը ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին, գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտորին, ուսանողության, երիտասարդության և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտորին, ֆակուլտետների դեկաններին մշակել ԵՊԼՀ-ի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշները և ներկայացնել ԵՊԼՀ ռեկտորատի քննարկմանը:
4. Սույն որոշման կատարման ապահովումը հանձնարարել ՈԱԿ -ի ղեկավարին, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին, գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտորին, ՈԻսանողության, երիտասարդության և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտորին, ֆակուլտետների դեկաններին, իսկ հսկողությունը՝ ՈԱԿ-ի ղեկավարին:

****

28.10.2014թ. N 2 նիստի

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. 2013-2014 ուստարվա ամփոփիչ ատեստավորման և գարնանային քննաշրջանի արդյունքների ամփոփում /Զեկ. Բ. Մարգարյան/:

2. 2014-2015 ուսումնական տարվա հեռակա ուսուցման բաժնի ընդունելության արդյունքների ամփոփում /Զեկ. Ս. Մարգարյան/:

3. ԵՊԼՀ որակի ապահովման կենտրոնի 2014-2015թթ գործողությունների պլանի հաստատում/Զեկ. Ռ. Խաչատրյան/:

4. ԵՊԼՀ պրոֆեսորադասախոսման կազմի վերլուծության վերաբերյալ /Զեկ. Ռ. Խաչատրյան/:

5. Ընթացիկ հարցեր:

*****

Լսելով և քննարկելով 2013-2014 ուստարվա գարնանային քննաշրջանի և 2013-2014 ուստարվա բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման արդյունքների վերաբերյալ ուսումնական գծով պրոռեկտոր Բ.Մարգարյանի հաշվետվությունը՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1) 2013-2014 ուստարվա գարնանային քննաշրջանի արդյունքների և 2013 -2014 ուստարվա բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման արդյունքների վերաբերյալ ուսումնական գծով պրոռեկտոր Բ.Մարգարյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

2) Ամփոփելով 2013-2014 ուստարվա գարնանային քննաշրջանի արդյունքները և հիմք ընդունելով ֆակուլտետային խորհուրդների հաշվետվությունները՝ 2013-2014 ուստարվա գարնանային քննաշրջանի արդյունքները գնահատել «*բավարար»:*

3) Հիմք ընդունելով ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների ներկայացրած հաշտվությունները՝ ամփոփիչ ատեստավորման ընթացքը և արդյունքները գնահատել «*բավարար*»:

4) Հաշվի առնելով 2013 -2014 ուստարվա գարնանային քննաշրջանի և ամփոփիչ ատեստավորման արդյունքները՝ *արձանագրել հետևյալ թերացումները.*

4.1. ՕԼ, ԹՄՀ և ՌՕԼՄՀ ֆակուլտետների բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների ամփոփիչ ատեստավորման և մագիստրոսական թեզերի պաշտպանության ընդհանուր առաջադիմությունը 2013-2014 ուսումնական տարում կազմում է 94,5%, որը 1.5%-ով զիջում է 2012-2013 ուսումնական տարվա 96% առաջադիմությանը: Առաջադիմության անկումը պայմանավորված է ֆակուլտետների /ՕԼ՝ 4.3%-ով, ԹՄՀ՝ 0.4%-ով, ՌՕԼՄՀ՝0.4%-ով, մագ.՝ 0.8%-ով/ առաջադիմության անկմամբ:

4.2. Տեսական առարկաներից լուծարումների թվի աճ, որը խոչընդոտում է հետազոտական աշխատանքներին /թեզ, ավարտական աշխատանք/:

4.3. Այլ ուսումնական հաստատություններից մագիստրատուրա ընդունված ուսանողների ցածր առաջադիմություն՝ լեզվական և օտար լեզվով դասավանդվող առարկաներից:

4.4. 2013-2014 ուստարվա ամփոփիչ ատեստավորման ընդհանուր առաջադիմության անկում բոլոր ֆակուլտետներում /ներառյալ մագիստրատուրայում/:

4.5. 2013-2014 ուստարում գարնանային քննաշրջանի արդյունքներով վատ առաջագիմության համար 21 ուսանող հեռացվել է համալսարանից:

4.6. Բակալավրիատում վատ առաջադիմություն է գրանցվել հատկապես «Լեզվաբանության ներածություն», «Անգլերենի տեսական քերականություն» «Գործնական օտար լեզու» «Քերականություն», «Թարգմանության տեսություն» առարկաներից:

4.7. Մագիստրատուրայում լուծարումներ են արձանագրվել հատկապես Լեզվաբանություն և SS, Թարգմանչական գործ, Միջազգային հարաբերություններ, Եվրոպագիտություն, Քաղաքագիտություն մասնագիտությունների շրջանակներում:

5) Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ՀԱՆՁՆԱՐԱՐԵԼ.

5.1. Լեզվաբանության և հաղորդակցման տեսության, և անգլերենի հնչյունաբանության և քերականության ամբիոններին վերանայել «Լեզվաբանության ներածություն», «Անգլերենի տեսական քերականություն», «Թարգմանության տեսություն» դասընթացների առարկայական նկարագրերը:

5.2. Ամբիոնն երի վարիչներին ամբիոնական նիստերում պարբերաբար քննարկման առարկա դարձնել, վերահանձնումների միջանկյալ/ամփոփիչ ստուգումների և լուծարումների բովանդակային կողմը, որպեսզի ծագած բոլոր հարցերը ստանան իրենց լուծումն ու պատասխանները նախքան այդ աշխատանքների վերսկսումը:

5.3. Ամբիոններին մշակել և ցուցաբերել տեսական առարկաների դասավանդման այնպիսի մոտեցումներ, որոնք թույլ կտան ուսանողին յուրացնել տեսական նյութը և կապել այն գործնական առաջադրանքի հետ:

5.4. Լեզվական ամբիոններին կազմակերպել լրացուցիչ լեզվական դասընթացներ այլ բուհերից մագիստրատուրա ընդունված ուսանողների համար՝ նրանց լեզվական գիտելիքները հնարավորինս համապատասխանեցնելով ԵՊԼՀ բակալավրիատի շրջանավարտների լեզվական մակարդակին:

5.5. Դեկաններին՝ ֆակուլտետային խորհուրդներում կազմակերպել քննարկում վերոնշյալ հարցերի շուրջ և արդյունքները ուսումնական վարչություն ներկայացնել մինչև ս.թ. դեկտեմբերի 15-ը:

5.6. Բոլոր թողարկող ամբիոններին՝ մինչև ս.թ. նոյեմբերի 25 -ը ուսումնական մաս ներկայացնել առաջարկություններ ընթացիկ ուսումնական տարբա ամփոփիչ ատեստավորման և ավարտական քննությունների համակարգված կազմակերպման և անցկացման վերաբերյալ:

5.7. Հանձնարարել բոլոր թողարկող ամբիոններին՝ խստացնել և առավել հետևողական դարձնել ամբիոնների հսկողությունը թեզերի թեմաների ընտրության, քննարկման, ինչպես նաև խորհրդատվական գործունեության համակարգված իրականացման ուղղությամբ:

5.8. Բոլոր թողարկող ամբիոններին՝ առավել մեծ ուշադրություն դարձնել ավարտական և մագիստրոսական թեզերի հետազոտական մասին՝ ավարտական աշխատանքներում կարևորելով ուսանողների ինքնուրույն աշխատանք կատարելու կարողությունները:

5.9. Բոլոր թո ղարկող ամբիոններին՝ վերանայել և արդիականացնել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաները, ինչպես նաև գրավոր և բանավոր ամփոփիչ ատեստավորման արդյունքների հիման վրա կատարել վերլուծություն դրանց արդյունավետության գնահատման նպատակով: Արդյունքները ներկայացնել ուսումնական մաս՝ մինչև ս/թ նոյեմբերի 30-ը:

Սույն որոշման կատարումը դնել համալսարանի ՕԼ, ԹՄՀ, ՌՕԼՄՀ ֆակուլտետների դեկանների և թողարկող ամբիոնների վարիչների, իսկ հսկողությունը ուսումնական գծով պրոռեկտոր Բ. Մարգարյանի վրա:

*****

Լսելով և քննարկելով հեռակա ուսուցման բաժնի ղեկավար Ս. Մարգարյանի հաղորդումը 2014-2015 ուսումնական տարվա հեռակա ուսուցման բաժնի ընդունելության արդյունքների վերաբերյալ՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Ի գիտություն ընդունել հեռակա ուսուցման բաժնի ղեկավար Ս. Մարգարյանի հաղորդումը 2014-2015 ուսումնական տարվա հեռակա ուսուցման բաժնի ընդունելության արդյունքների վերաբերյալ:

*****

Լսելով և քննարկելով ԵՊԼՀ հեռակա ուսուցման բաժնի լուծարման և ԵՊԼՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի ստեղծման մասին հարցը՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Ղեկավարվելով «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով և նույն հոդվածի 5-րդ կետով՝

1. Լուծարել ԵՊԼՀ հեռակա ուսուցման բաժինը:
2. Ստեղծել ԵՊԼՀ հեռակա ուսուցման ֆակուլտետ:

*****

Լսելով և քննարկելով ԵՊԼՀ ՈԱԿ-ի ղեկավար Ռ. Խաչատրյանի հաղորդումը ԵՊԼՀ Որակի ապահովման կենտրոնի 2014-2015թթ. գործողությունների պլանի վերաբերյալ՝ ԵՊԼՀ գիտական խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

Հաստատել որակի ապահովման կենտրոնի 2014-2015թթ. գործողությունների պլանը:

*****

Լսելով և քննարկելով ԵՊԼՀ Որակի ապահովման կենտրոնի ղեկավար Ռ. Խաչատրյանի հաղորդումը ԵՊԼՀ պրոֆեսորադասախոսական կազմի վերլուծության զեկույցի վերաբերյալ՝ ԵՊԼՀ գիտական խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

Ընդունել ի գիտություն ԵՊԼՀ պրոֆեսորադասախոսական կազմի վերլուծության զեկույցը:

25.11.2014թ. N 3 նիստի

ՕՐԱԿԱՐԳ

1. Պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական գործունեության որակի ապահովման հայեցակարգի հաստատում *(զեկ.՝ Որակի ապահովման կենտրոնի ղեկավար Ռ.Խաչատրյան)*:

2. ԵՊԼՀ ներքին կարգապահական կանոնների հաստատում *(զեկ.՝ Ուսանողության, երիտասարդության և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր՝ Յ. Ակոպյան)*:

3. ԵՊԼՀ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգի վերահաստատում *(զեկ.՝ Ուսանողության, երիտասարդության և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր՝ Յ. Ակոպյան)*:

4. Մրցույթ՝ դոցենտի գիտական կոչում շնորհելու համար:

5. Ընթացիկ հարցեր:

Լսելով Քննարկելով ԵՊԼՀ որակի ապահովման կենտրոնի ղեկավար Ռ. Խաչատրյանի ներկայացրած պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական գործունեության որակի ապահովման հայեցակարգի նախագիծը՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1) Պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական գործունեության որակի ապահովման հայեցակարգում համապատասխան փոփոխություններ կատարելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Գ.Գասպարյան - Ռեկտոր, ***հանձնաժողովի նախագահ***

Անդամներ ՝

Բ.Մարգարյան - Ուսումնական գծով պրոռեկտոր

Լ.Ֆլջյան - Գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտոր

Ց. Ակոպյան - Ուսանողության, երիտասարդության և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր

Ի.Մադոյան - ՕԼ ֆակուլտետի դեկան

Հ.Ճանճապանյան - ԹՄՀ ֆակուլտետի դեկան

Ն.Տատկալո - ՌՕԼՄՀ ֆակուլտետի դեկանի ժ/պ

Ս.Մարգարյան - Հեռակա ուսուցման ֆակուլտետի դեկան

Ն.Մանուկյան - Ֆրանսերենի ամբիոնի վարիչ

Է.Ղազարյան - Գերմաներենի ամբիոնի վարիչ

Ն.Հովհաննիսյան - Անգլերենի հնչյունաբան. և քերականության ամբիոնի վարիչ

Գ.Եղիազարյան - Անգլերենի բառագիտության և ոճաբանության ամբիոնի վարիչ

Ք.Սողիկյան - Անգլերենի հաղորդակց. և թարգմանության ամբիոնի վարիչ

Ֆ.Հովհաննիսյան - Եվրոպական և արևելյան լեզուների ամբիոնի վարիչ

Կ.Աբրահամյան - Լեզվաբանության ամբիոնի վարիչ

Լ.Միլիտոսյան - Մանկ. և լեզուների դասավանդման մեթոդ. ամբիոնի վարիչ

Լ.Մարկոսյան - Ռուսաց և սլավոնական լեզվաբանության ամբիոնի վարիչ

Ն.Խաչատրյան - Համաշխարհային գրականության և մշակույթի ամբիոնի վարիչ

Գ.Գևորգյան - Հայագիտության ամբիոնի վարիչ

Տ.Թորոսյան - ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մարդու իրավունքների, ժողովրդավարության և եվրոպագիտության ամբիոնի վարիչ

Ռ.Խաչատրյան - Կրթության կառավարման և պլանավորման ամբիոնի վարիչ

Հ.Մադոյան - Փիլիսոփայության ամբիոնի վարիչ

Ս.Խաչատրյան - Ֆիզդաստիարակության ամբիոնի վարիչ

Տ.Հովհաննիսյան - <<Միջազգային լրագրություն>> ԳՈՒ կենտրոնի ղեկավար

Մ.Հայրապետյան - <<Միջազգային տուրիզմ>> ԳՈՒ կենտրոնի ղեկավար

Ն.Մելքոնյան - <<Տեղեկատվության և հանրային հաղորդակցման տեխնոլոգիաներ (PR) >> ԳՈՒ կենտրոնի ղեկավար

Ս.Առաքելյան - Տեղեկատվական կրթական և վեբ տեխնոլոգիաների կենտրոնի ղեկավար

2) Հանձնարարել վերոնշյալ հանձնաժողովին ուսումնասիրել պրոֆեսորա-դասախոսական կազմի մասնագիտական գործունեության որակի ապահովման հայեցակարգը և առաջարկությունները ներկայացնել որակի ապահովման կենտրոն մինչև 2015թ. հունվարի 30-ը:

3) Հանձնարարել որակի ապահովմ ան կենտրոնի ղեկավար Ռ. Խաչատրյանին գիտխորհրդի հաստատմանը ներկայացնել հայեցակարգի լրամշակված տարբերակը:

*****

2. Լսելով ԵՊԼՀ ներքին կարգապահական կանոնների հաստատման վերաբերյալ ուսանողության, երիտասարդության և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր Ց. Ակոպյանի հաղորդումը՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել և գործողության մեջ դնել Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի ***ներքին կարգապահական կանոնները:***

*****

3. Լսելով ԵՊԼՀ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգի վերահաստատման վերաբերյալ ուսանողության, երիտասարդության և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր՝ Ց. Ակոպյանի հաղորդումը՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել և գործողության մեջ դնել Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի ***«Ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգը»:***

*****

4.ԼՍԵՑԻՆ - Համալսարանի գիտքարտուղարի ժ/պ Հասմիկ Փիլավջյանին, ով գիտխորհրդի քննարկմանը ներկայացրեց անգլերենի բառագիտության և ոճաբանության ամբիոնի ավագ դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու Ռուզաննա Սամվելի Գևորգյանի դիմումը նրան դոցենտի գիտական կոչում շնորհելու համար:

Քվեարկության համար գիտխորհրդի անդամներից ընտրվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով.

Ա.Եղիազարյան	- նախագահ
Կ. Գուլանյան	- անդամ
Վ.Գաբրիելյան	- անդամ

Գիտական խորհրդի 53 անդամներից ներկա էին 48-ը, որոնցից քվեարկեցին՝ ՝40՞-կողմ, ՝7՞-դեմ, անվավեր է ճանաչվել ՝1՞ քվեաթերթիկ:

Բաց քվեարկությամբ միաձայն հաստատեցին փակ /գաղտնի/ քվեարկության արդյունքները:

ՈՐՈՇԵՑԻՆ - 1. Հաստատել փակ /գաղտնի/ քվեարկության արդյունքները:

2. Հաշվի առնելով, որ Ռուզաննա Սամվելի Գևորգյանի կատարած գիտա-մանկավարժական աշխատանքը համապատասխանում է ՀՀ Կառավարության 2001թ. հուլիսի 9-ի թիվ 615 «ՀՀ գիտամանկավարժական կադրերի պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգ»-ի 5-րդ հոդվածի “բ” ենթակետին, բանասիրական գիտությունների թեկնածու ***Ռուզաննա Սամվելի Գևորգյանին*** շնորհել դոցենտի գիտական կոչում «Լեզվաբանություն» մասնագիտությամբ և ներկայացնել ՀՀ ԲՈՀ՝ հաստատելու ԵՊԼՀ-ի գիտական խորհրդի որոշումը:

*****

ԼՍԵՑԻՆ - Համալսարանի գիտքարտուղարի ժ/պ Հասմիկ Փիլավջյանին, ով գիտխորհրդի քննարկմանը ներկայացրեց Լեզվաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի ավագ դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու Աշխեն Շոթայի Հայրապետյանի դիմումը նրան դոցենտի գիտական կոչում շնորհելու համար:

Քվեարկության համար գիտխորհրդի անդամներից ընտրվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով.

Ա.Եղիազարյան	- նախագահ
Կ. Գուլանյան	- անդամ
Վ.Գաբրիելյան	- անդամ

Գիտական խորհրդի 53 անդամներից ներկա էին 48-ը, որոնցից քվեարկեցին՝
Կողմ - 40, դեմ - 8:

Բաց քվեարկությամբ միաձայն հաստատեցին փակ /գաղտնի/ քվեարկության արդյունքները:

ՈՐՈՇԵՑԻՆ - 1. Հաստատել փակ /գաղտնի/ քվեարկության արդյունքները:

2. Հաշվի առնելով, որ Աշխեն Շոթայի Հայրապետյանի կատարած գիտա-մանկավարժական աշխատանքը համապատասխանում է ՀՀ Կառավարության 2001թ. հուլիսի 9-ի թիվ 615 «ՀՀ գիտամանկավարժական կադրերի պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգ»-ի 5-րդ հոդվածի “բ” ենթակետին, բանասիրական գիտությունների թեկնածու ***Աշխեն Շոթայի Հայրապետյանին*** շնորհել դոցենտի գիտական կոչում «Լեզվաբանություն» մասնագիտությամբ և ներկայացնել ՀՀ ԲՈՀ՝ հաստատելու ԵՊԼՀ-ի գիտական խորհրդի որոշումը:

*****

5. ԸՆԹԱՅԻԿ ՀԱՐՑԵՐ

Լսելով և քննարկելով՝ Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի կողմից «Լեզվաբանություն» մասնագիտությամբ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամի թափուր տեղի համար հայտարարված ընտրություններին մասնակցելու համար ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ, գիտության վաստակավոր գործիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Գասպարյանի թեկնածության առաջադրմանը հավանություն տալու վերաբերյալ ԵՊԼՀ ռեկտոր, պրոֆեսոր Գ.Գասպարյանի հաղորդումը՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Հավանություն տալ Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի կողմից պրոֆեսոր Սեդա Քերոբի Գասպարյանի առաջադրմանը «Լեզվաբանություն» մասնագիտությամբ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամի թափուր տեղի համար հայտարարված ընտրություններին մասնակցելու համար և արտահայտել իր աջակցությունը նրան:

*****

Լսելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2010թ. դեկտեմբերի 2-ի N 1064-Ա որոշմամբ հաստատված Երևանի պետական լեզվահասարակագիտական համալսարանի խորհրդի կազմում, խորհրդի անդամ՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ելենա Վլադիմիրի Կարաբեգովայի մահվան պատճառով, փոփոխություն կատարելու վերաբերյալ ԵՊԼՀ ռեկտոր Գ.Գասպարյանի հաղորդումը՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 23 հունիսի 2005թ. N 975-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատության խորհրդի ձևավորման» կարգը՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի 2010թ. դեկտեմբերի 2-ի N 1064-Ա որոշմամբ հաստատված ԵՊԼՀ խորհրդի կազմում, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ելենա Վլադիմիրի Կարաբեգովայի փոխարեն քվերակության արդյունքների հիման վրա

/միաձայն/ առաջադրել մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հայկ Հմայակի Պետրոսյանի թեկնածությունը:

*****

Լսելով ԵՊԼՀ յուրաքանչյուր ամբիոնում հրատարակչության պատասխանատու և խմբագիր լինելու վերաբերյալ ԵՊԼՀ ռեկտոր տկն. Գ.Գասպարյանի հաղորդումը՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1) Հանձնարարել ամբիոնների վարիչներին նշանակել հրատարակչական հարցերով ամբիոնային պատասխանատուներ և նրանց անունները ներկայացնել գիտական մաս մինչև ս.թ. դեկտեմբերի 20-ը:

2) Հրատարակչական հարցերով ամբիոնային պատասխանատուների ծանրաբեռ-նվածություններում ներառել 30 ժամ:

3) Հանձնարարել ամբիոններին մինչև 2015թ. հունվարի 15 -ը գիտական մաս ներկայացնել 2015թ. ամբիոնի կողմից հրատարակվող հոդվածների ժողովածուների ցանկը:

25.12.2014թ. N 4 նիստի

ՕՐԱԿԱՐԳ

1. ԵՊԼՀ Համալսարանական ցկյանս ուսումնառության ռազմավարության հաստատում *(զեկ.՝ Լրացուցիչ և շարունակական կրթության կենտրոնի ղեկավար Ս.Կարաբեկյան)*:
2. ՌՕԼՄՀ ֆակուլտետի դեկանի ընտրություն:
3. Անգլերենի հաղորդակցման և թարգմանության ամբիոնի վարիչի ընտրություն:
4. Մրցույթ՝ դոցենտի գիտական կոչում շնորհելու համար:
5. Ընթացիկ հարցեր:

1. Լսելով ԵՊԼՀ շարունակական կրթության ռազմավարության վերաբերյալ Լրացուցիչ և շարունակական կրթության կենտրոնի ղեկավար Ս.Կարաբեկյանի հաղորդումը՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1) Ընդունել ի գիտություն ԼՇԿ ղեկավար Ս.Կարաբեկյանի հաղորդումը:

2) Հաստատել ԵՊԼՀ շարունակական կրթության ռազմավարությունը և իրականացման գործողությունների ծրագիրը:

3) Հանձնարարել ԼՇԿ ղեկավար Ս.Կարաբեկյանին մեկամսյա ժամկետում ռեկտորատի հաստատմանը ներկայացնել ԼՇԿ նոր կանոնադրության նախագիծը և առաջնահերթ միջոցառումների ժամանակացույցը:

*****

2. ԼՍԵՑԻՆ – Ուսումնական գծով պրոռեկտոր Բ. Մարգարյանի հաղորդումը Ռուսաց և օտար լեզուների և միջազգային հաղորդակցությունների ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնում Նինա Իգորի Տատկալոյի հաստատման մասին:

Ուսումնասիրելով ներկայացված փաստաթղթերը և հաշվի առնելով ամբիոնների երաշխավորությունները, ինչպես նաև ֆակուլտետի խորհրդի փակ /գաղտնի/ քվեարկության արդյունքները՝ Բ. Մարգարյանը նշեց, որ Նինա Իգորի Տատկալոն ունի մասնագիտական և անձնային բոլոր անհրաժեշտ որակները, ունի բազմամյա գիտամանկավարժական փորձ, ինչի կիրառումը կարևոր արդյունք է տալիս իր աշխատանքում դասախոսների և ուսանողների հետ, նա մեծ սեր և հարգանք է վայելում ուսանողների և իր գործընկերների շրջանում:

Քվեարկության համար գիտխորհրդի անդամներից ընտրվեց հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

Տ. Թորոսյան - նախագահ
Ե. Էթարյան - անդամ
Ս. Կրանինա - անդամ

Գիտական խորհրդի 53 անդամներից ներկա էին 47 - ը, որոնցից քվեարկեցին՝ 33 - «կողմ» , 14 - «դեմ»:

Փակ /գաղտնի/ քվեարկության արդյունքների հիման վրա Նինա Իգորի Տատկալոն հաստատվում է Ռուսաց և օտար լեզուների և միջազգային հաղորդակցությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնում:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Հաստատել փակ /գաղտնի/ քվեարկության արդյունքները:

2. Ռուս աց և օտար լեզուների և միջազգային հաղորդակցությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնում հաստատել **Նինա Իգորի Տատկալոյին**:

*****

3. ԼՍԵՑԻՆ - Ուսումնական գծով պրոռեկտոր Բ. Մարգարյանի հաղորդումը Անգլերենի հաղորդակցման և թարգմանության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի տեղակալման համար ներկայացրած Քրիստինե Հովհաննեսի Սողիկյանի թեկնածությունը, որը հաստատվել է ԹՄՀ ֆակուլտետի խորհրդի նիստին: Ուսումնասիրելով ներկայացված փաստաթղթերը և հաշվի առնելով ամբիոնի երաշխավորությունը, ինչպես նաև ԹՄՀ ֆակուլտետի խորհրդի փակ /գաղտնի/ քվեարկության արդյունքները՝ բ.գ.թ., դոցենտ Քրիստինե Հովհաննեսի Սողիկյանի Անգլերենի հաղորդակցման և թարգմանության ամբիոնի վարիչի պաշտոնում ընտրվելու համար՝ ԵՊԼՀ–ի գիտական խորհրդի մրցույթային հանձնաժողովը եզրակացնում է, որ Ք.Սողիկյանի թեկնածությունը բավարարում է Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների և

ԵՊԼՀ-ի ամբիոնների վարիչների ընտրության կարգում նշված պահանջներին և առաջարկում է բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Քրիստինե Հովհաննեսի Սողիկյանի թեկնածությունը ԵՊԼՀ-ի գիտական խորհրդի հաստատմանը Անգլերենի հաղորդակցման և թարգմանության ամբիոնի վարիչի պաշտոնի տեղակալման համար:

Քվեարկության համար գիտխորհրդի անդամներից ընտրվեց հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

Տ. Թորոսյան - նախագահ
Ե. Էթարյան - անդամ
Ս. Կրանինա - անդամ

Գիտական խորհրդի 53 անդամներից ներկա էին 47 - ը, որոնցից քվեարկեցին՝ 45 - «կողմ» , 1 - «դեմ», անվավեր է ճանաչվել 1 քվեաթերթիկ:

Փակ /գաղտնի/ քվեարկության արդյունքների հիման վրա Քրիստինե Հովհաննեսի Սողիկյանը հաստատվում է Անգլերենի հաղորդակցման և թարգմանության ամբիոնի վարիչի պաշտոնում:

ՈՐՈՇԵՑԻՆ - 1. Հաստատել փակ /գաղտնի/ քվեարկության արդյունքները:

2. Անգլերենի հաղորդակցման և թարգմանության ամբիոնի վարիչի պաշտոնում

հաստատել **Քրիստինե Հովհաննեսի Սողիկյանին:**

*****

4.ԼՍԵՑԻՆ - Համալսարանի գիտքարտուղարի ժ/պ Հասմիկ Փիլավջյանին, ով գիտխորհրդի քննարկմանը ներկայացրեց համաշխարհային գրականության և մշակույթի ամբիոնի ավագ դասախոս, բանասիրական գիտություն ների թեկնածու Անի Գրիգորի Ջանիկյանի դիմումը՝ նրան դոցենտի գիտական կոչում շնորհելու համար:

Քվեարկության համար գիտխորհրդի անդամներից ընտրվեց հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

Տ. Թորոսյան - նախագահ
Ե. Էթարյան - անդամ
Ս. Կրանինա - անդամ

Գիտական խորհրդի 53 անդամներից ներկա էին 47-ը, որոնցից քվեարկեցին՝ «46» - կողմ, «1» - դեմ:

Բաց քվեարկությամբ միաձայն հաստատեցին փակ /գաղտնի/ քվեարկության արդյունքները:

ՈՐՈՇԵՑԻՆ - 1. Հաստատել փակ /գաղտնի/ քվեարկության արդյունքները:

2. Հաշվի առնելով, որ Անի Գրիգորի Ջանիկյանի կատարած գիտամանկավարժական աշխատանքը համապատասխանում է ՀՀ Կառավարության 2001թ. հուլիսի 9-ի թիվ 615 «ՀՀ գիտամանկավարժական կադրերի պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգ»-ի 5-րդ հոդվածի “բ” ենթակետին, բանասիրական

գիտությունների թեկնածու ***Անի Գրիգորի Ջանիկյանին*** շնորհել դոցենտի գիտական կոչում «Գրականագիտություն» մասնագիտությամբ և ներկայացնել ՀՀ ԲՈՀ՝ հաստատելու ԵՊԼՀ-ի գիտական խորհրդի որոշումը:

*****

<u>ԼՍԵՑԻՆ</u> - Համալսարանի գիտքարտուղարի ժ/պ Հասմիկ Փիլավջյանին, ով գիտխորհրդի քննարկմանը ներկայացրեց համաշխարհային գրականության և մշակույթի ամբիոնի ավագ դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու Սոնյա Վիտալիի Ապրեսովայի դիմումը՝ նրան դոցենտի գիտական կոչում շնորհելու համար:

Քվեարկության համար գիտխորհրդի անդամներից ընտրվեց հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

Տ. Թորոսյան - նախագահ
Ե. Էթարյան - անդամ
Ս. Կրանինա - անդամ

Գիտական խորհրդի 53 անդամներից ներկա էին 47-ը, որոնցից քվեարկեցին՝ «45» - կողմ, «1» - դեմ, անվավեր ճանաչվեց 1 քվեաթերթիկ:

Բաց քվեարկությամբ միաձայն հաստատեցին փակ /գաղտնի/ քվեարկության արդյունքները:

<u>ՈՐՈՇԵՑԻՆ</u> - 1. Հաստատել փակ /գաղտնի/ քվեարկության արդյունքները:

2. Հաշվի առնելով, որ Սոնյա Վիտալիի Ապրեսովայի կատարած գիտա-մանկավարժական աշխատանքը համապատասխանում է ՀՀ Կառավարության 2001թ. հուլիսի 9-ի թիվ 615 «ՀՀ գիտամանկավարժական կադրերի պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգ»-ի 5-րդ հոդվածի “բ” ենթակետին, բանասիրական գիտությունների թեկնածու ***Սոնյա Վիտալիի Ապրեսովային*** շնորհել դոցենտի գիտական կոչում «Գրականագիտություն» մասնագիտությամբ և ներկայացնել ՀՀ ԲՈՀ՝ հաստատելու ԵՊԼՀ-ի գիտական խորհրդի որոշումը:

*****

<u>ԼՍԵՑԻՆ</u> - Համալսարանի գիտքարտուղարի ժ/պ Հասմիկ Փիլավջյանին, ով գիտխորհրդի քննարկմանը ներկայացրեց ֆրանսերենի ամբիոնի ավագ դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու Վահան Ալբերտի Զաքարյանի դիմումը՝ նրան դոցենտի գիտական կոչում շնորհելու համար:

Քվեարկության համար գիտխորհրդի անդամներից ընտրվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով.

Տ. Թորոսյան - նախագահ
Ե. Էթարյան - անդամ
Ս. Կրանինա - անդամ

Գիտական խորհրդի 53 անդամներից ներկա էին 47-ը, որոնցից քվեարկեցին՝ «45» - կողմ, «2» - դեմ:

Բաց քվեարկությամբ միաձայն հաստատեցին փակ /գաղտնի/ քվեարկության արդյունքները:

ՈՐՈՇԵՑԻՆ - 1. Հաստատել փակ /գաղտնի/ քվեարկության արդյունքները:

2. Հաշվի առնելով, որ Վահան Ալբերտի Զաքարյանի կատարած գիտա-մանկավարժական աշխատանքը համապատասխանում է ՀՀ Կառավարության 2001թ. հուլիսի 9-ի թիվ 615 «ՀՀ գիտամանկավարժական կադրերի պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգ»-ի 5-րդ հոդվածի "բ" ենթակետին, բանասիրական գիտությունների թեկնածու ***Վահան Ալբերտի Զաքարյանին*** շնորհել դոցենտի գիտական կոչում «Լեզվաբանություն» մասնագիտությամբ և ներկայացնել ՀՀ ԲՈՀ՝ հաստատելու ԵՊԼՀ-ի գիտական խորհրդի որոշումը:

*****

ԼՍԵՑԻՆ - Համալսարանի գիտքարտուղարի ժ/պ Հասմիկ Փիլավջյանին, ով գիտխորհրդի քննարկմանը ներկայացրեց եվրոպական և ասիական լեզուների ամբիոնի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու Մոհամմադ Մալեք-Մոհամմադիի դիմումը՝ նրան դոցենտի գիտական կոչում շնորհելու համար:

Քվեարկության համար գիտխորհրդի անդամներից ընտրվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով.

Տ. Թորոսյան - նախագահ
Ե. Էթարյան - անդամ
Ս. Կրանինա- անդամ

Գիտական խորհրդի 53 անդամներից ներկա էին 47-ը, որոնցից քվեարկեցին՝ «45» - կողմ, «1» - դեմ, անվավեր ճանաչվեց 1 քվեաթերթիկ:

Բաց քվեարկությամբ միաձայն հաստատեցին փակ /գաղտնի/ քվեարկության արդյունքները:

ՈՐՈՇԵՑԻՆ - 1. Հաստատել փակ /գաղտնի/ քվեարկության արդյունքները:

2. Հաշվի առնելով, որ Մոհամմադ Մալեք-Մոհամմադիի կատարած գիտա-մանկավարժական աշխատանքը համապատասխանում է ՀՀ Կառավարության 2001թ. հուլիսի 9-ի թիվ 615 «ՀՀ գիտամանկավարժական կադրերի պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգ»-ի 5-րդ հոդվածի "բ" ենթակետին, բանասիրական գիտությունների թեկնածու ***Մոհամմադ Մալեք-Մոհամմադիին*** շնորհել դոցենտի գիտական կոչում «Լեզվաբանություն» մասնագիտությամբ և ներկայացնել ՀՀ ԲՈՀ՝ հաստատելու ԵՊԼՀ-ի գիտական խորհրդի որոշումը:

*****

5. Ընթացիկ հարցեր:

Լսելով Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված միջոցառումները համակարգելու նպատակով հանձնաժողով ձևավորելու վերաբերյալ ուսանողության, երիտասարդության և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր Ց.Ակոպյանի հաղորդումը գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1) Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված միջոցառումները համակարգելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Գ.Գասպարյան	- Ռեկտոր, ***հանձնաժողովի նախագահ***
Հ. Ներսիսյան	- Ուսանողական խորհրդի նախագահ, ***հանձնաժողովի քարտուղար***

Անդամներ՝

Ց. Ակոպյան	- Ուսանողության, երիտասարդության և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր
Հ.Ճանճապանյան	- ԹՄՀ ֆակուլտետի դեկան
Ի.Մաղոյան	- ՕԼ ֆակուլտետի դեկան
Ն.Տատկալո	- ՌՕԼՄՀ ֆակուլտետի դեկան
Ս.Մարգարյան	- Հեռակա ուսուցման ֆակուլտետի դեկանի ժ/պ
Ն.Մանուկյան	- Ֆրանսերենի ամբիոնի վարիչ
Է.Ղազարյան	- Գերմաներենի ամբիոնի վարիչ
Ն.Հովհաննիսյան	- Անգլերենի հնչյունաբան. և քերակ. ամբիոնի վարիչ
Գ.Եղիազարյան	- Անգլերենի բառագիտության և ոճաբ. ամբիոնի վարիչ
Ք.Սողիկյան	- Անգլերենի հաղորդ. և թարգմանության ամբիոնի վարիչ
Ֆ.Հովհաննիսյան	- Եվրոպական և արևելյան լեզուների ամբիոնի վարիչ
Կ.Աբրահամյան	- Լեզվաբանության ամբիոնի վարիչ
Լ.Միլիտոսյան	- Մանկ. և լեզուների դասավանդ. մեթոդ. ամբիոնի վարիչ
Լ.Մարկոսյան	- Ռուսաց և սլավոնական լեզվաբանության ամբիոնի վարիչ
Ն.Խաչատրյան	- Համաշխարհային գրակ. և մշակույթի ամբիոնի վարիչ
Գ.Գևորգյան	- Հայագիտության ամբիոնի վարիչ
Տ.Թորոսյան	- ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մարդու իրավունքների, ժողովրդավարության և եվրոպագիտության ամբիոնի վարիչ
Ռ.Խաչատրյան	- Կրթության կառավարման և պլան. ամբիոնի վարիչ
Հ.Մաղոյան	- Փիլիսոփայության ամբիոնի վարիչ
Ս.Խաչատրյան	- Ֆիզդաստիարակության ամբիոնի վարիչ

Տ.Հովհաննիսյան - «Միջազգային լրագրություն» ԳՈՒ կենտրոնի ղեկավար

Մ.Հայրապետյան - «Միջազգային տուրիզմ» ԳՈՒ կենտրոնի ղեկավար

Ն.Մելքոնյան - «Տեղեկատվության և հանրային հաղորդակցման տեխնոլոգիաներ (PR)» ԳՈՒ կենտրոնի ղեկավար

Հ.Ափյան - ռեկտորի գլխավոր խորհրդական

Ն.Իսրայելյան - Միջազգային կապերի վարչության ղեկավար

Մ.Ամիրխանյան - Ռուսաց լեզվի և մշակույթի կենտրոնի ղեկավար

Լ.Բաբամյան - Կարիերայի կենտրոնի ղեկավար

Վ.Զաքարյան - Երիտասարդ գիտնականների խորհրդի նախագահ

Ս.Գևորգյան - Հասարակայնության հետ կապերի պատասխանատու

Ա.Չուլյան - Գրադարանի վարիչ

Խ.Թևոսյան - Արհմիության նախագահ

2) Հանձնարարել հանձնաժողովին մինչև 2015թ. փետրվարի 15-ը գիտական խորհրդի հաստատմանը ներկայացնել ԵՊԼՀ Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված միջոցառումների ծրագիրը:

3) Հանձնարարել հանձ նաժողովին 2015թ. դեկտեմբերին գիտական խորհրդին ներկայացնել Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված 2015թ. իրականացված միջոցառումների հաշվետվությունը:

*****

Լսելով և քննարկելով գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտոր Լ. Ֆլջյանի հաղորդումը «Լեզվաբանական/լեզվական միջմշակութային կրթության նորարարական լաբորատորիայի ստեղծում» գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման և զարգացման ծրագրի ֆինանսական և բովանդակային հաշվետվության վերաբերյալ՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Ի գիտություն ընդունել գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտոր Լ. Ֆլջյանի «Լեզվաբանական/լեզվական միջմշակութային կրթության նորարարական լաբորատորիայի ստեղծում» գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման և զարգացման ծրագրի 2014թ. ֆինանսական և բովանդակային հաշվետվությունը և ներկայացնել ՀՀ ԿԳ նախարարության գիտության պետական կոմիտե:

*****

Լսելով և քննարկելով «Հեռանկարային ուսումնասիրությունների և նախաձեռնությունների» կենտրոնի գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման և զարգացման ծրագրի ֆինանսական և բովանդակային հաշվետվության վերաբերյալ գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտոր Լ. Ֆլջյանի հաղորդումը՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

«Հեռանկարային ուսումնասիրությունների և նախաձեռնությունների» կենտրոնի գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման և զարգացման ծրագրի ֆինանսական և բովանդակային հաշվետվության վերաբերյալ գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտոր Լ. Ֆլջյանի հաղորդումն ընդունել ի գիտություն և ներկայացնել ՀՀ ԿԳ նախարարության գիտության պետական կոմիտե:

17.02.2015 թ. N 5 նիստի

ՕՐԱԿԱՐԳ

1. ԵՊԼՀ կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների 2014թ. ծրագրի հաշվետվություն /Զեկ.՝ ուսանողության, երիտասարդության և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր Ց.Ակոպյան/:
2. ԵՊԼՀ կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների 2015թ. ծրագրի հաստատում /Զեկ.՝ ուսանողության, երիտասարդության և հասարա-կայնության հետ կապերի գծով պրոռեկտոր Ց.Ակոպյան/:
3. Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների ծրագրի հաստատում /Զեկ.՝ ուսանողության, երիտասարդության և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր Ց.Ակոպյան/:
4. Ուսխորհրդի 2014թ. հաշվետվություն /Զեկ.՝ ուսխորհրդի նախագահ Հ. Ներսիսյան/:
5. Ընթացիկ հարցեր:

1. Լսելով Ուսանողության, երիտասարդության և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր՝ Ց. Ակոպյանին, ով գիտական խորհրդին ներկայացրեց «ԵՊԼՀ կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների 2014թ. ծրագրի հաշվետվություն»-ը՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Ընդունել ի գիտություն ուսանողության, երիտասարդության և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր՝ Ց. Ակոպյանի հաղորդումը:

2. «ԵՊԼՀ կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների 2014թ. ծրագրի հաշվետվություն»-ը գնահատել բավարար:

*****

2. Լսելով ԵՊԼՀ կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների 2015թ. ծրագրի հաստատման վերաբերյալ ուսանողության, երիտասարդության և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր՝ Ց. Ակոպյանի հաղորդումը՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել ԵՊԼՀ հակակոռուպցիոն միջոցառումները համակարգող հանձնաժողովի ներկայացրած ԵՊԼՀ կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2015թ. համալիր միջոցառումների ծրագիրը:

2. Հանձնարարել ԵՊԼՀ հակակոռուպցիոն միջոցառումները համակարգող հանձնաժողովին մինչև 2015թ. մարտի 1-ը պատրաստել ԵՊԼՀ կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2015թ. համալիր միջոցառումների ծրագրի իրականացման գործողությունների պլանը, որտեղ հստակ կնշվեն իրականացվելիք ծրագրերի բնութագիրը և ժամանակացույցը:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Ուսանողության, երիտասարդության և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր Ց. Ակոպյանի վրա:

*****

3.Լսելով Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված ԵՊԼՀ միջոցառումների ծրագրի հաստատման վերաբերյալ ուսանողության, երիտասարդության և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր՝ Ց. Ակոպյանի հաղորդումը գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված ԵՊԼՀ միջոցառումների ծրագիրը:

*****

4. Լսելով ԵՊԼՀ ուսխորհրդի նախագահ Հ. Ներսիսյանին, ով գիտական խորհրդին ներկայացրեց ԵՊԼՀ ուսանողական խորհրդի 2014թ. հաշվետվությունը գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Ընդունել ի գիտություն Հ.Ներսիսյանի հաղորդումը:

2. ԵՊԼՀ ուսխորհրդի 2014թ. հաշվետվությունը գնահատել բավարար:

*****

5. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

Լսելով և քննարկելով «Հանրային կառավարում» մասնագիտության առարկայացանկում փոփոխություն կատարելու մասին ԵՊԼՀ ուսումնական գծով պրոռեկտոր Բ.Մարգարյանի հաղորդումը՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Հիմք ընդունելով Կրթության կառավարման և պլանավորման ամբիոնի վարիչ Ռ.Խաչատրյանի զեկուցագիրը՝ 2014-2015 ուստարվա 2 -րդ կիսամյակից «Հանրային կառավարում» մասնագիտության առաջին կուրսի առարկայացանկի «Հասարակության հետ կապերի կառավարում» դասընթացը փոխարինել «Քաղաքականության պլանավորում և վերլուծություն» դասընթացով:

*****

Լսելով և քննարկելով բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Միքայել Դավթի Ամիրխանյանին՝ որպես «Գիտության վաստակավոր գործիչ» առաջադրելու վերաբերյալ ԵՊԼՀ գիտքարտուղարի ժ/պ Հ. Փիլավջյանի հաղորդումը՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Հիմք ընդունելով գիտության ոլորտում կատարած երկարամյա, անբասիր և բեղմնավոր աշխատանը **«Գիտության վաստակավոր գործիչ»** պատվավոր կոչմանն արժանանալու համար՝ բաց քվերակության արդյունքների հիման վրա /միաձայն/, առաջադրել բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Միքայել Դավթի Ամիրխանյանի թեկնածությունը:

31.03.2015 թ. N 6 նիստի

ՕՐԱԿԱՐԳ

1. 2014-2015 ուսումնական տարվա ձմեռային քննաշրջանի արդյունքների ամփոփում /Զեկ.՝ Ուսումնական գծով պրոռեկտոր Բ.Մարգարյան/:

2. ԵՊԼՀ լավագույն ուսանող մրցանակաբաշխության կանոնակարգի հաստատում /Զեկ.՝ ուսանողության, երիտասարդության և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր Ց.Ակոպյան/:

3. «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2013» շրջանակներում իրականացվող գիտական թեմայի ամփոփիչ հաշվետվություն /Զեկ.՝ Լ. Բաբայան/:

4. Մրցույթ՝ դոցենտի գիտական կոչում շնորհելու համար:

5. Ընթացիկ հարցեր:

1. Լսելով և քննարկելով ուսումնական գծով պրոռեկտոր Բելա Մարգարյանի 2014-2015 ուստարվա ձմեռային քննաշրջանի ամփոփիչ հաշվետվությունը և 2013-2014 և 2014-2015 ուսումնական տարիների ձմեռային քննաշրջանների արդյունքների համեմատական վերլուծությունը՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1) Ուսումնական գծով պրոռեկտոր Բ. Մարգարյանի 2014-2015 ուստարվա ձմեռային քննաշրջանի ամփոփիչ հաշվետվությունը և 2013-2014 և 2014-2015 ուսումնական տարիների ձմեռային քննաշրջանների արդյունքների համեմատական վերլուծությունն ընդունել ի գիտություն:

2) Հիմք ընդունելով 2013-2014, 2014-2015 ուսումնական տարիների ձմեռային քննաշրջանների արդյունքներն արձանագրել՝

2.1) Առկա ուսուցմամբ բակալավրիատում 2014-2015 ուստարվա ձմեռային քննաշրջանում առաջադիմությունը կազմում է **65,6%:** Համեմատելով նախորդ ուսումնական տարվա հետ, որը կազմում է **65,5%՝** գրեթե անփոփոխ է:

2.2) Հեռակա ուսուցմամբ բակալավրիատում 2014-2015 ուստարվա ձմեռային քննաշրջանում առաջադիմությունը կազմում է **69,7%:** Նախորդ ուստարվա 39.3% առաջադիմության համեմատությամբ ընթացիկ ուստարում արձանագրվել է առաջադիմության զգալի աճ **30.4 %**-ով:

2.3) Առկա ուսուցմամբ մագիստրատուրայում 2014-2015 ուստարում արձանագրված 79.4 % առաջադիմությունը 6,9%-ով զիջում է 2013-2014 ուսումնական տարվա 86,3 % առաջադիմությանը:

2.4) Հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայում 2014-2015 ուստարում արձանագրվել է 66,6% առաջադիմություն, որը 16,3%-ով գերազանցում է 2013-2014 ուսումնական տարվա ձմեռային քննաշրջանի 50,3 % առաջադիմությանը:

2.5) 2014-2015 ուսումնակական տարում առկա և հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի միջին առաջադիմությունը կազմում է ***73 %,*** որը ***4.7%-ով գերազանցում է*** 2013-2014 ուստարվա ***68.3%*** առաջադիմությանը:

2.6) Առկա ուսուցմամբ բակալավրիատում ընթացիկ ուստարվա ձմեռային քննաշրջանում անբավարար գնահատականների թիվը ***151***-ով նվազել է նախորդ ուստարվա համեմատ: 2014-2015 ուստարվա ձմեռային քննաշրջանում գրանցվել է ***687*** անբավարար գնահատական, իսկ 2013-2014 ուստարում՝ ***838:***

2.7) 2014-2015 ուստարվա ձմեռային քննաշրջանի արդյունքների համաձայն վատ առաջադիմության պատճառով հեռացված ուսանողների քանակը **18** է, նախորդ ուստարվա համեմատ հեռացված ուսանողների թիվը նվազել է (2013-2014 ուստարվա ձմեռային քննաշրջանի արդյունքներով վատ առաջադիմության համար հեռացվել է **26** ուսանող): Վերջինս պայմանավորված է վերահանձնման շաբաթի առկայությամբ, որը մինչև լուծարումը ուսանողին հնարավորություն է տալիս հանձնել կուտակային գնահատականի այն բաղադիրչը, որի շեմը չի հաղթահարել:

2.8) Դասախոսություններն անց են կացվում ժամանակակից մեթոդներով (անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան տեխնիկական միջոցներով հագեցված լսարաններում), ինչը նպաստում է ուսանողների ստեղծագործական և ինքնուրույն մտավոր աշխատանքի ձևավորմանն ու զարգացմանը:

2.9) Բուհն իրականացնում է տարբերակված ուսուցում բոլոր առարկաների գծով՝ տարբեր մասնագիտությունների և մասնագիտացումների համար: Անհատական մոտեցման արդյունքում բոլոր մասնագիտություններով քննաշրջանը ավարտվել է դրական արդյունքներով՝ միևնույն ժամանակ հավատարիմ մնալով ծրագրային պահանջներին:

2.10) Մշտական բնույթ է կրում ներֆակուլտետային և միջֆակուլտետային կապը: Այդ համատեղ աշխատանքը հնարավորություն է տալիս առավել սահուն դարձնել ֆակուլտետների ամենօրյա աշխատանքը, ինչն էլ իր հերթին ապահովում է ուսումնական գործընթացի սահուն ընթացքը:

2.11) Ուսումնական գործընթացի ճիշտ և արդյունավետ կազմակերպման արդյունքում հեռակա ուսուցման ֆակուլտետից առկա ուսուցման համակարգ տեղափոխվելիս, ինչպես նաև առկա ուսուցման համակարգից հեռակա ուսուցման համակարգ տեղափոխվելիս մեր բուհի ուսանողների մոտ առարկայական տարբերությունների քանակը չի գերազանցում թույլատրելի սահմանը:

Ամփոփելով 2014-2015 ուստարվա ձմեռային քննաշրջանի արդյունքները և հիմք ընդունելով ֆակուլտետային խորհուրդների հաշվետվությունները՝ 2014-2015 ուստարվա ձմեռային քննաշրջանի արդյունքները գնահատել «*բավարար*»՝

3) արձանագրելով հետևյալ թերացումները.

3.1) Որակավորումների ազգային շրջանակի 7-րդ՝ հետազոտողի մակարդակը (մագիստրատուրա) ենթադրում է, որ մագիստրոսը պետք է տիրապետի գիտահետազոտական աշխատանք կատարելու հմտություններին, սակայն դասընթացը լիարժեք չի ապահովում այս պայմանը. ուսանողի նախնական գիտելիքները նույնպես բավարար չեն այդ նպատակին հասնելու համար:

3.2) Գնահատման չափանիշները, մեխանիզմները և գործիքները հստակ չեն. հիմնականում գնահատվում է միայն դասընթացից ստացած գիտելիքը և ոչ թե վերջնարդյունքը:

3.3) Համեմատելով ընթացիկ ուսումնական տարվա և նախորդ ուսումնական տարվա ձմեռային քննաշրջանների արդյունքները նկատելի է, որ գերազանց գնահատականների թիվը 38-ով նվազել է:

3.4) Հաճախակի դասերից բացակայող ուսանողները, չունենալով գիտելիքների պահանջվող պաշար, կարող են, ձախողել տվյալ տեսական /գործնական առարկային հաջորդող տեսական /գործնական առարկաների նյութի յուրացումը և չհաղթահարել բավարար գնահատականի շեմը:

3.5) Ցածր է ուսանողների մոտիվացիան նոր արտալսարանային մասնագիտական միջոցառումների նկատմամբ:

3.6) Լեզվաբանություն/իտալերեն բաժնի 3-րդ կուրսի տեսական հնչյունաբանություն, բառագիտություն և բանավոր խոսք առարկաներից լուծարումների քանակի բարձր ցուցանիշ է արձանագրվել, որի պատճառը ուսանողների հաճախակի բացակայություններն են /առարկայական նկարագրում ներկայության բաղադրիչ չկա/:

3.7) 3-րդ և 4-րդ կուրսերի համեմատաբար ցածր առաջադիմությունը և ավարտական աշխատանքների սակավությունը: Պատճառները՝ 3-րդ կուրսի <<Տեսական հնչունաբանություն>> առարկայի մեծաքանակ լուծարումների քանակը և 4-րդ կուրսի ընդունելության միասնական քննություններից համեմատաբար ցածր գնահատականներ ստանալը:

3.8) Ուսանողները բավականաչափ ժամանակ չեն տրամադրում ինքնուրույն աշխատանքին և բավարարվում են միայն լսարանային ժամերով, դասընթացների այս պահանջը լիարժեք չի իրականացվում:

3.9) Լիովին մշակված չեն գրագողության դեմ պայքարի մեխանիզմները, առանց հղումների այլոց մտքերը օգտագործելու դեպքերում միշտ չէ, որ ուսանողը գնահատվում է զրո:

4. Վերոնշյալ խնդիրները լուծելու համար անհրաժեշտ է՝

4.1) Առավել կարևորել դասավանդողի անհատական մոտեցումը յուրաքանչյուր ուսանողին, բավարար ուշադրություն դարձնել կիսամյակային ընթացիկ գնահատականների պարբերականությանը, վերանայել դասավանդման մեթոդները և գնահատման չափանիշները, ինչպես նաև առարկայական նկարագրերը համապատասխանեցնել ուսանողների ընդհանուր ծանրաբեռնվածությանը՝ մանրամասնելով լսարանային և արտալսարանային բեռնվածության բաղադրիչները:

4.2) Ինքնուրույն աշխատանքն օգտագործել որպես խթանիչ միջոց դասընթացն էլ ավելի լավ ընկալելու և յուրացնելու համար: Ապահովել ուսումնական գործընթացում ուսանողների առավել ակտիվ ներգրավվածություն:

4.3) Քննական տեսական դասընթացների նկարագրերում ներառել ներկայության բաղադրիչը, ամփոփիչ ստուգողական հարցումը կազմակերպել բանավոր, ինչը հնարավորություն կտա ուսանողներին ոչ միայն մասնագիտական առումով, այլ նաև հոգեբանորեն պատրաստվել ամփոփիչ ատեստավորմանը:

4.4) Պարբերաբար վերանայել դասավանդման մեթոդներն ու գնահատման չափանիշները:

4.5) Առարկայական նկարագրերը համապատասխանեցնել ուսանողների ընդհանուր ծանրաբեռնվածությանը և մասնագիտական հետաքրքրությունների շրջանակին:

5. Հիմք ընդունելով վերոգրյալը՝

5.1) Հանձնարարել ամբիոններին և ԳՈՒ կենտրոններին՝

- վերանայել և տեսական և գործնական առարկաների նկարագրերը, հատուկ ուշադրություն դարձնելով ուսանողների ընթացիկ և վերջնարդյունքի ինքնուրույն աշխատանքի առկայությանը և դրա չափաբաժնին, այդ գործընթացը կարգավորող գործիքներին /լրացուցիչ նյութեր, էլեկտրոնային համապատասխան աղբյուրների հետ ծանոթացմանը և այլն/ առարկայական նկարարգրերը:
- ճշգրիտ հետևել դեկանատների կողմից սահմանված և ամբիոններ նախապես ուղարկված ստուգումների /մոդուլների/ և ամփոփումների ժամացույցին:
- ամբիոնի նիստերի ժամանակ դասախոսներին ծանոթացնել /անհրաժեշտության դեպքում լրացուցիչ անգամ/ ուսումնական գործընթացը կարգավորող բոլոր որոշումներին, հրամաններին և ժամանակացույցներին:
- Մասնագիտական կրթական ծրագրերի վերջնարդյունքներով պայմանավորված՝ մշակել գնահատման մեխանիզմներ:
- Վերանայել ներկայության բաղադրիչի հարցը և անհրաժեշտության դեպքում ներկայացնել առաջարկություն:

5.2) Հանձնարարել դեկաններին՝

- ֆակուլտետային խորհրդների ժամանակ ներկայացնել և քննարկել ուսումնական գործընթացը կարգավորող բոլոր որոշումները, հրամանները և ժամանակացույցները
- ուսումնական գծով պրոռեկտորի կողմից հաստատած ժամատախտակները առնվազն 7 օր առաջ ուղարկել ամբիոններին և հետևել դրանց ճշգրիտ կատարմանը
- ելնելով անհրաժեշտությունից ամսվա ընթացքում առնվազն 1 անգամ անցկացնել աշխատանքային ժողովներ ամբիոնների վարիչների և ծրագրերի պատասխանատուների հետ

Սույն որոշման կատարումը դնել դեկանների, ամբիոնների վարիչների, ԳՈՒ կենտրոնների ղեկավարների, իսկ վերահսկողությունը՝ ուսումնական գծով պրոռեկտորի վրա:

*****

2. Լսելով «ԵՊԼՀ լավագույն ուսանող մրցանակաբաշխության կանոնակարգ»-ի հաստատման վերաբերյալ ուսանողության, երիտասարդության և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր Ց. Ակոպյանի հաղորդումը՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել և գործողության մեջ դնել «ԵՊԼՀ լավագույն ուսանող մրցանակաբաշխության կանոնակարգ»-ը:

*****

3. Լսելով «ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐԻ և ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅՑՈՐԴՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ - 2013» մրցույթ «Քաղաքավարի խոսքի կառուցվածքային կաղապարները և դրանց լեզվառճական արտահայտչամիջոցները ժամանակակից ֆրանսերենում (հայերենի զուգադրությամբ)» գիտական թեմայի 01.04.2014-31.03.2015թ. ժամանակահատվածն ընդգրկող Լիլիթ Արկադիի Բաբայանի ամփոփիչ հաշվետվությունը՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

«ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐԻ և ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅՑՈՐԴՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ - 2013» մրցույթ «Քաղաքավարի խոսքի կառուցվածքային կաղապարները և դրանց լեզվառճական արտահայտչամիջոցները ժամանակակից ֆրանսերենում (հայերենի զուգադրությամբ)» գիտական թեմայի 01.04.2014-31.03.2015թ. ժամանակահատվածն ընդգրկող Լիլիթ Արկադիի Բաբայանի ամփոփիչ հաշվետվությունն ընդունել ի գիտություն և ներկայացնել ՀՀ ԿԳ նախարարության գիտության պետական կոմիտե:

*****

<u>4.ԼՍԵՑԻՆ</u> - Համալսարանի գիտքարտուղարի ժ/պ Հասմիկ Փիլավջյանին, ով գիտխորհրդի քննարկմանը ներկայացրեց անգլերենի հնչյունաբանության և քերականության ամբիոնի ավագ դասախոս, բանասիրական գիտությունների

թեկնածու Աստղիկ Մուշեղի Կարապետյանի դիմումը՝ նրան դոցենտի գիտական կոչում շնորհելու վերաբերյալ:

Քվեարկության համար գիտխորհրդի անդամներից ընտրվեց հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

Ս.Խաչատրյան - նախագահ
Խ.Թևոսյան - անդամ
Ա.Թունյան - անդամ

Գիտական խորհրդի 54 անդամներից ներկա էին 48-ը, որոնցից քվեարկեցին՝

«46» - կողմ, «1» - դեմ, անվավեր է ճանաչվել «1» քվեաթերթիկ:

Բաց քվեարկությամբ միաձայն հաստատեցին փակ /գաղտնի/ քվեարկության արդյունքները:

<u>ՈՐՈՇԵՑԻՆ</u> - 1. Հաստատել փակ /գաղտնի/ քվեարկության արդյունքները:

2. Հաշվի առնելով, որ Աստղիկ Մուշեղի Կարապետյանի կատարած գիտա-մանկավարժական աշխատանքը համապատասխանում է ՀՀ Կառավարության 2001թ. հուլիսի 9-ի թիվ 615 «ՀՀ գիտամանկավարժական կադրերի պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգ»-ի 5-րդ հոդվածի “բ” ենթակետին, բանասիրական գիտությունների թեկնածու ***Աստղիկ Մուշեղի Կարապետյանին*** շնորհել դոցենտի գիտական կոչում «Լեզվաբանություն» մասնագիտությամբ և ներկայացնել ՀՀ ԲՈՀ՝ հաստատելու ԵՊԼՀ-ի գիտական խորհրդի որոշումը:

*****

5. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

Լսելով և քննարկելով գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման և զարգացման ծրագրերի ֆինանսական և բովանդակային հայտերի վերաբերյալ գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտոր Լ. Ֆլջյանի հաղորդումը՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Ի գիտություն ընդունել գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտոր Լ. Ֆլջյանի գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման և զարգացման ծրագրի 2016թ. ֆինանսական և բովանդակային ներքոնշյալ հայտերը և ներկայացնել ՀՀ ԿԳ նախարարության գիտության պետական կոմիտե.

- *«Լեզվաբանական/լեզվական/միջմշակութային կրթության նորարարական լաբորատորիայի պահպանում»*
- *«Հեռանկարային ուսումնասիրությունների և նախաձեռնությունների կենտրոն»*
- *«Երևանի պետական լեզվաբանական համալսարանի անգլերենի հաղորդակցման և թարգմանության ամբիոնին կից ակադեմիական գրագրության կենտրոնի ստեղծում (acacent)»*

- *«e-գիտակ» երիտասարդ գիտնականների և ուսանողների համար վիրտուալ հետազոտական ցանցի ստեղծում»*
- *«Լեզվի փիլիսոփայության հետազոտական և թարգմանական լաբորատորիա (Research and Translation Lab for Philosophy of Language)»*

22.04.2015 թ. N 7 նիստի

ՕՐԱԿԱՐԳ

6. **ԵՊԼՀ 2014թ. գիտահետազոտական և գիտամեթոդական գործունեության հաշվետվություն և 2015թ. գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների պլանի հաստատում:** /Զեկ.՝ Գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտոր Լ. Ֆլջյան/:

7. **Համալսարանական շարունակական կրթության կենտրոնի կանոնադրության և կենտրոնի գործունեությունը կարգավորող փաստաթղթերի հաստատում** /Զեկ.՝ Լրացուցիչ և շարունակական կրթության կենտրոնի ղեկավար Ս. Կարաբեկյան/:

8. **Ընթացիկ հարցեր:**

1. Լսելով և քննարկելով ԵՊԼՀ 2014թ. գիտահետազոտական և գիտամեթոդական գործունեության հաշվետվության և 2015թ. գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների պլանի հաստատման վերաբերյալ գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտոր Լ. Ֆլջյանի հաղորդումը՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1) Գիտահետազոտական և գիտամեթոդական գործունեության վերաբերյալ գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտոր Լ. Ֆլջյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն */հաշվետվությունը կցվում է/:*

2) ԵՊԼՀ 2014թ. գիտահետազոտական և գիտամեթոդական գործունեությունը գնահատել բավարար:

3) Հաստատել համալսարանի ամբիոնների և ուսումնագիտական կենտրոնների 2015 թվականի գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների պլանները */Տես՝ Հավելված 1/:*

4) Հիմք ընդունելով 2014թ. գիտահետազոտական և գիտամեթոդական գործունեության հաշվետվությունը՝ հանձնարարել.

4.1. Համալսարանի ամբիոններին և գիտաուսումնական կենտրոններին՝ ակտիվացնել համալսարանների ամբիոնների և գիտաուսումնական կենտրոնների միջազգային և միջբուհական գիտական և գիտահետազոտական գործունեությունը՝ նոր գիտական ծրագրեր մշակելու և անցկացնելու միջոցով և մինչև սույն թվականի

դեկտեմբերի 1-ը ներկայացնել միջբուհական գիտական և գիտահետազոտական գործունեության գործողության պլանը:

4.2. Համալսարանի ամբիոններին և գիտաուսումնական կենտրոններին մինչև 2015թ. դեկտեմբերի 1-ը ներկայացնեն ամբիոնի կամ ԳՈՒ կենտրոնի 2015թ. գիտական գործունեության ավելի ընդլայնված հաշվետվություն՝ ներառելով դասախոսների կողմից կատարված գրախոսությունները, խորհրդատվությունները, քննարկումները, սեմինարները և այլն:

4.3. Համալսարանի ամբիոններին՝ մինչև սույն թվականի դեկտեմբերի 1-ը մշակել և առաջարկել ավելի շատ ծրագրեր դոկտորանտների համար:

4.4. Հետբուհական կրթության ոլորտում ավելացնել արտասահմանցի դոկտորանտ-ների և ասպիրանտների/հայցորդների թիվը:

4.5. Ելնելով ՀՀ ԲՈՀ-ի կողմից սահմանված և ՀՀ կառավարության 26.02.2015թ. հ. 214-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի դրույթներից՝ համագործակցել այլ բուհերի համապատասխան ամբիոնների հետ և ներգրավել գիտական ղեկավարներ ԵՊԼՀ ասպիրանտներին/հայցորդներին ղեկավարելու համար:

4.6. Մինչև սույն թվականի հոկտեմբերի 1-ը հանձնարարել գիտական մասին վերանայել հետբուհական կրթական ծրագրերն ու համապատասխան ուսումնական պլանները՝ համաձայնեցնելով դրանք ՀՀ ԲՈՀ-ի նոր պահանջներին:

5) Սույն որոշման կատարումը հանձնարարել համալսարանի գիտական մասին, ամբիոնների վարիչներին, գիտաուսումնական կենտրոնների ղեկավարներին, իսկ կատարման հսկողությունը՝ գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտոր Լ. Ֆլջյանին:

*****

2. Լսելով Լրացուցիչ և շարունակական կրթության կենտրոնի ղեկավար Ս. Կարաբեկյանի հաղորդումը համալսարանական շարունակական կրթության կենտրոնի կանոնադրության և կենտրոնի գործունեությունը կարգավորող փաստաթղթերի հաստատման վերաբերյալ՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. ԵՊԼՀ Լրացուցիչ և շարունակական կրթության կենտրոնը վերան վանել *«Համալսարանական շարունակական կրթության կենտրոն»:*

2. Հաստատել համալսարանական շարունակական կրթության կենտրոնի կանոնա-դրությունը և դնել գործողության մեջ */կանոնադրությունը կցվում է/:*

3. Հանձնարարել համալսարանական շարունակական կրթության կենտրոնին որակի ապահովման կենտրոնի հետ համատեղ մշակել ծրագրեր դասախոսների որակավորման բարձրացման վերաբերյալ:

4. 2015թ. աշնանը սկսել պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման գործընթացը:

26.05.2015 թ. N 8 նիստի

ՕՐԱԿԱՐԳ

1. Որակի ապահովման կենտրոնի 2014-2015 ուստարվա գործունեության հաշվետվություն /զեկ.՝ Ռ.Խաչատրյան/:
2. Մագիստրատուրայի 2015-2016 ուստարվա անվճար տեղերի բաշխման վերաբերյալ /զեկ.՝ Բ.Մարգարյան/:
3. ՕԼ ֆակուլտետի դեկանի ամենամյա հաշվետվություն /զեկ.՝ Ի.Մադոյան/:
4. Դոցենտի գիտական կոչման շնորհում:
5. Ընթացիկ հարցեր:

1. Լսելով ՈԱԿ-ի 2014-2015 ուսումնական տարվա հաշվետվության վերաբերյալ ԵՊԼՀ Որակի ապահովման կենտրոնի ղեկավար Ռ. Խաչատրյանի հաղորդումը՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1) Ի գիտություն ընդունել որակի ապահովման կենտրոնի ղեկավար Ռ. Խաչատրյանի 2014-2015 ուսումնական տարվա հաշվետվությունը:

2) ՈԱԿ-ի 2014-2015 ուսումնական տարվա գործունեությունը գնահատել բավարար:

3) Հանձնարարել ՈԱԿ-ին համապատասխան ամբիոնների հետ քննարկել, մշակել և գիտական խորհրդի առաջիկա նիստում ներկայացնել Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի փորձագիտական խմբի կողմից ներկայացված 2015թ. ապրիլի 11-ի N9 որոշման մեջ առկա դրույթներին համապատասխան թերությունների վերացմանն ուղղված գործողությունների վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց:

4) Սույն որոշման կատարման ապահովումը հանձնարարել ՈԱԿ-ի ղեկավարին:

*****

2. Լսելով Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի Օտար լեզուների ֆակուլտետի 2014-2015 ուստարվա գործունեության վերաբերյալ դեկան Ի. Մադոյանի հաշվետվությունը՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Ի գիտություն ընդունել Օտար լեզուների ֆակուլտետի 2014-2015 ուստարվա գործունեության վերաբերյալ ֆակուլտետի դեկան Ի. Մադոյանի հաշվետվությունը:

2. Օտար լեզուների ֆակուլտետի 2014-2015 ուստարվա գործունեությունը գնահատել բավարար:

3. Հիմք ընդունելով Օտար լեզուների ֆակուլտետի 2014-2015 ուստարվա գործունեության վերաբերյալ դեկան Ի. Մադոյանի հաշվետվությունը՝ *հանձնարարել.*

3.1. Ամբիոնների վարիչներին

- մինչև 2015 թվականի հոկտեմբերի 30-ը ամբիոնի նիստին քննարկել և ֆակուլտետի խորհրդին ներկայացնել առաջարկներ ամբիոնի գիտական աշխատանքներում ուսանողների հնարավոր մասնակցությունն ապահովող և խթանող միջոցառումների վերաբերյալ;

- մինչև 2015թվականի հոկտեմբերի 15-ը և 2016թվականի մարտի 15-ը դեկանատի հաստատմանը ներկայացնել միջանկյալ և ամփոփիչ ստուգումների համար նախատեսված նյութերը;

- մինչև 2015-2016 ուստարվա սկիզբը բակալավրիական կրթական ծրագրերի տեսական առարկաների առարկայական նկարագրերում ներառել ներկայության բաղադրիչ;

3.2 ֆակուլտետային ՈՒԽ-ին՝ կազմակերպել խորհրդատվական հանդիպումներ հա-մալսարանում գործող կարգերի վերաբերյալ տարբեր կուրսերում սովորող ուսանողների տեղեկացվածության մակարդակը բարձրացնելու նպատակով:

4. Սույն որոշման կատարումը հանձնարարել Օտար լեզուների ֆակուլտետի ամբիոնների վարիչներին և ֆակուլտետի ՈՒԽ-ին, իսկ կատարման հսկողությունը՝ ՕԼ ֆակուլտետի դեկան Ի. Մադոյանին:

*****

3.Լսելով 2015-2016 ուսումնական տարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ /անվճար/ առկա ուսուցմամբ մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության տեղերն ըստ մասնագիտացումների բաշխելու վերաբերյալ ուսումնական գծով պրոռեկտոր Բ.Մարգարյանի հաղորդումը՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2015թ. ապրիլի 16-ի N 409-Ն որոշումը 2015-2016 ուսումնական տարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ /անվճար/ առկա ուսուցմամբ մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության տեղերը բաշխել հետևյալ կերպ.

1) **032300 ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ ԳՈՐԾ - 10 (որից 1-ը՝ տարկետումով)**

Երկլեզու թարգմանիչներ /անգլերեն-հայերեն/ - **6** տեղ

Երկլեզու թարգմանիչներ /ֆրանսերեն-հայերեն/ - **1** տեղ

Երկլեզու թարգմանիչներ /գերմաներեն-հայերեն/ - **1** տեղ

Եռալեզու թարգմանիչներ /ռուսերեն - անգլերեն-հայերեն/ - **2** տեղ

2) **031100 ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ - 19 (որից 1-ը՝ տարկետումով, 7-ը՝ ԲԶ)**

Լեզվաբանություն և տեղեկատվական տեխնոլոգիաներ - **5** տեղ

Լեզվաբանություն-տիպաբանություն /անգլերեն/- **4** տեղ

Լեզվաբանություն – տիպաբանություն /ֆրանսերեն/ - **0**

Լեզվաբանություն – տիպաբանություն /գերմաներեն/ - **0**

Լեզվաբանություն – տիպաբանություն /իտալերեն/ - **3** տեղ

Բանակից զորացրվածներ - **7** տեղ

3) 031200 ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ - 9 Միջազգային տուրիզմ - **2** տեղ

Տեղեկատվություն և հանրային հաղորդակցման տեխնոլոգիաներ - **5** տեղ

Ռուսաց լեզու և միջմշակութային հաղորդակցություն - **2** տեղ

4) 100100 ՄԵՐՎԻՍ - 10 տեղ (որից 1-ը՝ տարկետման իրավունքով)

5) 031300 ՕՏԱՐ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ - 12 (որից 1-ը՝ տարկետումով)
Բանասիրություն - **1** տեղ

Բանասիրություն /համեմատական և ֆրանսիական գրականություն/ - **1** տեղ

Բանասիրություն /հրատարակչական գործ. թվային հրատարակություն / - **3** տեղ

Մանկավարժություն - **6** տեղ

Մանկավարժություն /ֆրանսերեն լեզվի մեթոդաբանություն և կրթական նորագույն տեխնոլոգիաներ/ - **1** տեղ

6) 032400 ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ - 5

Բանասիրություն /ռուսերեն/ - **1** տեղ

Մանկավարժություն /ռուսերենը որպես օտար լեզու / - **4** տեղ

7) 032000 ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ - 0

Կրթության կառավարում - **0**

8) 030600 ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ - 0

Միջազգային լրագրություն - **0**

9) 032700 ԵՎՐՈՊԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ - 3 տեղ

10) 030700 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ - 3 տեղ

11) 030200 ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ - 3 տեղ

Սույն որոշման կատարումը դնել ԵՊԼՀ դեկանների, իսկ վերահսկողությունը՝ ուսումնական գծով պրոռեկտոր Բ. Մարգարյանի վրա:

*****

4.ԼՍԵՑԻՆ - Համալսարանի գիտքարտուղարի ժ/պ Հասմիկ Փիլավջյանին, ով գիտ-խորհրդի քննարկմանը ներկայացրեց հայագիտության ամբիոնի ավագ դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու Գոհար Գառնիկի Վարդանյանի դիմումը՝ նրան դոցենտի գիտական կոչում շնորհելու վերաբերյալ:

Քվեարկության համար գիտխորհրդի անդամներից ընտրվեց հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

Ի. Մադոյան	- նախագահ
Ֆ. Հովհաննիսյան	- անդամ
Լ. Հովսեփյան	- անդամ

Գիտական խորհրդի 54 անդամներից ներկա էին 45-ը, որոնցից քվեարկեցին՝

«45» - կողմ, «0» - դեմ, անվավեր է ճանաչվել «0» քվեաթերթիկ:

Բաց քվեարկությամբ միաձայն հաստատեցին փակ /գաղտնի/ քվեարկության արդյունքները:

ՈՐՈՇԵՑԻՆ - 1. Հաստատել փակ /գաղտնի/ քվեարկության արդյունքները:

2. Հաշվի առնելով, որ հայագիտության ամբիոնի ավագ դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու Գոհար Գառնիկի Վարդանյանի կատարած գիտա-մանկավարժական աշխատանքը համապատասխանում է ՀՀ Կառավարության 2001թ. հուլիսի 9-ի թիվ 615 «ՀՀ գիտամանկավարժական կադրերի պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգ»-ի 5-րդ հոդվածի “բ” ենթակետին, բանասիրական գիտությունների թեկնածու ***Գոհար Գառնիկի Վարդանյանին*** շնորհել դոցենտի գիտական կոչում «Լեզվաբանություն» մասնագիտությամբ և ներկայացնել ՀՀ ԲՈՀ՝ հաստատելու ԵՊԼՀ-ի գիտական խորհրդի որոշումը:

*****

ԼՍԵՑԻՆ - Համալսարանի գիտքարտուղարի ժ/պ Հասմիկ Փիլավջյանին, ով գիտխորհրդի քննարկմանը ներկայացրեց հայագիտության ամբիոնի ավագ դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու Լիլիթ Գևորգի Գևորգյանի դիմումը՝ նրան դոցենտի գիտական կոչում շնորհելու վերաբերյալ:

Քվեարկության համար գիտխորհրդի անդամներից ընտրվեց հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

Ի. Մադոյան	- նախագահ
Ֆ. Հովհաննիսյան	- անդամ
Լ. Հովսեփյան	- անդամ

Գիտական խորհրդի 54 անդամներից ներկա էին 45-ը, որոնցից քվեարկեցին՝

«45» - կողմ, «0» - դեմ, անվավեր է ճանաչվել «0» քվեաթերթիկ:

Բաց քվեարկությամբ միաձայն հաստատեցին փակ /գաղտնի/ քվեարկության արդյունքները:

<u>ՈՐՈՇԵՑԻՆ</u> - 1. Հաստատել փակ /գաղտնի/ քվեարկության արդյունքները:

2. Հաշվի առնելով, որ հայագիտության ամբիոնի ավագ դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու Լիլիթ Գևորգի Գևորգյանի կատարած գիտա-մանկավարժական աշխատանքը համապատասխանում է ՀՀ Կառավարության 2001թ. հուլիսի 9-ի թիվ 615 «ՀՀ գիտամանկավարժական կադրերի պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգ»-ի 5-րդ հոդվածի “բ” ենթակետին, բանասիրական գիտությունների թեկնածու ***Լիլիթ Գևորգի Գևորգյանին*** շնորհել դոցենտի գիտական կոչում «Լեզվաբանություն» մասնագիտությամբ և ներկայացնել ՀՀ ԲՈՀ՝ հաստատելու ԵՊԼՀ-ի գիտական խորհրդի որոշումը:

*****

5. Ընթացիկ հարցեր.

Լսելով ԵՊԼՀ ռեկտոր, պրոֆեսոր Գ.Գասպարյանի հաղորդումը Դալյանի օտար լեզուների համալսարանի ռեկտոր, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սուն Յուխուային Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի պատվավոր պրոֆեսորի կոչում շնորհելու վերաբերյալ՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

«ԵՊԼՀ-ում պատվավոր կոչումներ շնորհելու կանոնակարգ»-ի 1.4. կետի համաձայն՝

1. Հայ-չինական հարաբերությունների զարգացման, ԵՊԼՀ Կոնֆուցիուսի ինստիտուտի գործունեության ընդլայնման և ԵՊԼՀ ուսանողների շրջանակում չինարեն լեզվի և մշակույթի տարածման գործում մեծ ներդրում ունենալու համար Դալյանի օտար լեզուների համալսարանի ռեկտոր, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սուն Յուխուային շնորհել Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի պատվավոր պրոֆեսորի կոչում:

2. Դալյանի օտար լեզուների համալսարանի ռեկտոր, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սուն Յուխուային գրանցել «ԵՊԼՀ-ի պատվավոր պրոֆեսորների և դոկտորների» Պատվո գրքում:

*****

Լսելով ԵՊԼՀ ռեկտոր, պրոֆեսոր Գ.Գասպարյանի հաղորդումը Դալյանի օտար լեզուների համալսարանի ռեկտոր, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սուն Յուխուային խորհրդակցական ձայնի իրավունքով ԵՊԼՀ գիտական խորհրդի պատվավոր անդամ ընտրելու վերաբերյալ՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Հիմք ընդունելով «ԵՊԼՀ-ում պատվավոր կոչումներ շնորհելու կանոնակարգ»-ի 3.1 և 3.2 կետերը՝ Դալյանի օտար լեզուների համալսարանի ռեկտոր, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սուն Յուխուային ընտրել ԵՊԼՀ գիտական խորհրդի պատվավոր անդամ՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

*****

Լսելով ուսումնական գծով պրոռեկտոր Բ.Մարգարյանի հաղորդումը «Տեղեկատվության և հանրային հաղորդակցման տեխնոլոգիաներ (PR)» մասնագիտության ուսումնական պլանում որոշակի փոփոխություններ կատարելու մասին՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Հիմք ընդունելով Տեղեկատվության և հանրային հաղորդակցման տեխնոլոգիաների գիտաուսումնական կենտրոնի ղեկավար Ն.Մելքոնյանի զեկուցագիրը /կցվում է/՝ «Տեղեկատվության և հանրային հաղորդակցման տեխնոլոգիաներ (PR)» մասնագիտության ուսումնական պլանում կատարել հետևյալ փոփոխությունները.

- «Մեդիայի գործունեության միջավայրը.օրենսդրություն և ինքնակարգավորում 2» (3-րդ կիսամյակ) առարկան փոխարինել «Հռետորական արվեստ» առարկայով,
- «Մեդիայի գործունեության միջավայրը.օրենսդրություն և ինքնակարգավորում 1» (2-րդ կիսամյակ) առարկան փոխարինել «Ներազդման հոգեբանություն» առարկայով,
- «Քաղաքական խոսույթի վերլուծություն» առարկան 2-րդ կիսամյակից տեղափոխել առաջին կիսամյակ «Քաղաքական գործընթացների վերլուծություն» անվանմամբ,
- «Քարոզչության հիմունքներ» առարկան ներառել ուսումնական պլանում (1-ին կիսամյակում):

23.06.2015 թ. N 9 նիստի

ՕՐԱԿԱՐԳ

1. Կարիերայի կենտրոնի 2014թ. գործունեության հաշվետվություն /Զեկ.՝ Կարիերայի կենտրոնի համակարգող Լ.Բաբամյան/:

2. Արտադրական և մանկավարժական պրակտիկայի արդյունքների ամփոփում /Զեկ.՝ուսումնական գործընթացի կազմակերպման և համակարգման բաժնի ղեկավարի ժ/պ Ա.Եղիազարյան/:

3. Պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումների շնորհում:

4. Ընթացիկ հարցեր:

1. Լսելով ԵՊԼՀ Կարիերայի կենտրոնի համակարգող Լ. Բաբամյանին, ով գիտական խորհրդին ներկայացրեց Կարիերայի կենտրոնի 2014թ. գործունեության հաշվետվությունը՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Ի գիտություն ընդունել ԵՊԼՀ Կարիերայի կենտրոնի համակարգող Լ. Բաբամյանի հաղորդումը կենտրոնի 2014թ. գործունեության վերաբերյալ:

2. ԵՊԼՀ Կարիերայի կենտրոնի գործունեությունը համարել բավարար։

3. Հանձնարարել Կարիերայի կենտրոնին մինչև 2015թ. դեկտեմբեր կնքել համաձայնագրեր գործատուների հետ՝ մշակելով մեխանիզմներ աշխատաշուկայում ԵՊԼՀ ուսանողների և շրջանավարտների մրցունակության խնթանման համար։

4. Հանձնարարել Կարիերայի կենտրոնին մինչև 2015թ. դեկտեմբեր ԵՊԼՀ ամբիոնների հետ համատեղ անցկացնել թեմատիկ կլոր-սեղան քննարկումներ՝ ակտիվացնելով բուհ-գործատու կապը։

5. Հանձնարարել Կարիերայի կենտրոնին մինչև 2015թ. դեկտեմբեր իրականացնել հարցումներ շրջանավարտների և գործատուների շրջանում՝ աշխատաշուկայի և աշխատաշուկայում ԵՊԼՀ ուսանողների և շրջանավարտների մրցունակության վերաբերյալ։

6. Հանձնարարել Կարիերայի կենտրոնին կազմակերպել միջացառում՝ նվիրված ազգային փոքրամասնությունների լեզուներին։

7. Սույն որոշման կատարման պատասխանատվությունը դնել Կարիերայի կենտրոնի համակարգող Լ. Բաբամյանի վրա, իսկ կատարման հսկողությունը՝ ԵՊԼՀ ֆինանսատնտեսական հարցերով պրոռեկտոր Ա. Ավագյանի։

*****

2. Լսելով և քննարկելով ԵՊԼՀ-ի 2014-2015 ուսումնական տարվա արտադրական և մանկավարժական պրակտիկայի արդյունքների վերաբերյալ ուսումնական գործընթացի կազմակերպման և համակարգման բաժնի ղեկավարի ժ/պ Ա.Եղիազարյանի հաղորդումը՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Ի գիտություն ընդունել ուսումնական գործընթացի կազմակերպման և համակարգման բաժնի ղեկավարի ժ/պ Ա. Եղիազարյանի հաշվետվությունը։

2. 2014-2015 ուսումնական տարվա արտադրական և մանկավարժական պրակտիկայի արդյունքները գնահատել բավարար։

3. Արտադրական և մանկավարժական պրակտիկայի կազմակերպումն ու իրականացումն առավել արդյունավետ դարձնելու նպատակով

4. Հանձնարարել՝

4.1. Մինչև 2016թ. ապրիլի 10-ը մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի, լեզվաբանության և հաղորդակցման տեսության, անգլերենի հաղորդակցման և թարգմանության, ֆրանսերենի, գերմաներենի, ռուսաց և սլավոնական լեզվաբանության, ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդու իրավունքների, ժողովրդավարության և եվրոպագիտության, կրթության կառավարման և պլանավորման, համաշխարհային գրականության և մշակույթի ամբիոններին, «Միջազգային լրագրություն», «Միջազգային տուրիզմ», տեղեկատվության և

հանրային հաղորդակցման տեխնոլոգիաների ԳՈՒ կենտրոններին ուսումնական վարչություն ներկայացնել հաշվետվությունները պրակտիկայի անմիջական ղեկավարների հետ վերջնարդյունքները մանրամասն քննարկելուց հետո:

4.2. Մինչև 2016թ. ապրիլի 10-ը մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի, լեզվաբանության և հաղորդակցման տեսության, անգլերենի հաղորդակցման և թարգմանության, ֆրանսերենի, գերմաներենի, ռուսաց և սլավոնական լեզվաբանության, ՅՈՒՆԵՍԿՕ -ի մարդու իրավունքների, ժողովրդավարության և եվրոպագիտության, կրթության կառավարման և պլանավորման, համաշխարհային գրականության և մշակույթի ամբիոններին, «Միջազգային լրագրություն», «Միջազգային տուրիզմ», տեղեկատվության և հանրային հաղորդակցման տեխնոլոգիաների ԳՈՒ կենտրոններին հաշվետվություններում ներառված SWOT վերլուծություն ները ուսումնական վարչություն ներկայացնել առավել հանգամանալից, ինչը կխթանի պրակտիկայի կազմակերպման գործընթացի արդյունավետությունը:

4.3. Մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 15-ը «Միջազգային լրագրություն», «Միջազգային տուրիզմ», Տեղեկատվության և հանրային հաղորդակցման տեխնոլոգիաների ԳՈՒ կենտրոններին մշակել համագործակցության ընդլայնման նոր մեխանիզմներ պրակտիկան ավելի արդյունավետ անցկացնելու նպատակով:

4.4. Մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 15-ը ֆակուլտետներին, ամբիոններին և ԳՈՒ կենտրոններին մշակել մեխանիզմներ ուսանողների նախաձեռնությամբ իրականացվող պրակտիկայի գործընթացի վերահսկողության և գնահատման համակարգը վերանայելու և բուհից դուրս գիտաարտադրական պրակտիկան կազմակերպելու նպատակով համագործակցելու այն կառույցների հետ, որտեղ պրակտիկայի արդյունքում ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները ուսանողը հնարավորություն կունենա առավելագույնս կիրառել հետազոտական աշխատանքն իրականացնելիս:

Սույն որոշման կատարման պատասխանատվությունը դնել ամբիոնների վարիչների, իսկ որոշման կատարման հսկողությունը՝ ուսումնական գծով պրոռեկտոր Բ. Մարգարյանի վրա:

*****

<u>3.ԼՍԵՑԻՆ</u> - Համալսարանի գիտքարտուղարի ժ/պ Հասմիկ Փիլավջյանին, ով գիտխորհրդի քննարկմանը ներկայացրեց Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի ռուսաց և սլավոնական լեզվաբանության ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու Մարիա Ալեքսանդրի Եղիազարյանի դիմումը՝ նրան պրոֆեսորի գիտական կոչում շնորհելու վերաբերյալ:

Քվեարկության համար գիտխորհրդի անդամներից ընտրվեց հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

Հ. Մադոյան - նախագահ
Ս. Մարգարյան - անդամ
Լ. Պողոսյան - անդամ

Գիտական խորհրդի 54 անդամներից ներկա էին 43-ը, որոնցից քվեարկեցին՝

«43» - կողմ, «0» - դեմ, անվավեր է ճանաչվել «0» քվեաթերթիկ:

Բաց քվեարկությամբ միաձայն հաստատեցին փակ /գաղտնի/ քվեարկության արդյունքները:

<u>ՈՐՈՇԵՑԻՆ</u> - 1. Հաստատել փակ /գաղտնի/ քվեարկության արդյունքները:

2. Հաշվի առնելով, որ ռուսաց և սլավոնական լեզվաբանության ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու Մարիա Ալեքսանդրի Եղիազարյանի կատարած գիտամանկավարժական աշխատանքը համապատասխանում է ՀՀ Կառավարության 2001թ. հուլիսի 9-ի թիվ 615 «ՀՀ գիտամանկավարժական կադրերի պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգ»-ի 6-րդ հոդվածի “բ” ենթակետին, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ ***Մարիա Ալեքսանդրի Եղիազարյանին*** շնորհել պրոֆեսորի գիտական կոչում «Մանկավարժություն» մասնագիտությամբ և ներկայացնել ՀՀ ԲՈՀ՝ հաստատելու ԵՊԼՀ-ի գիտական խորհրդի որոշումը:

*****

<u>ԼՍԵՑԻՆ</u> - Համալսարանի գիտքարտուղարի ժ/պ Հասմիկ Փիլավջյանին, ով գիտխորհրդի քննարկմանը ներկայացրեց անգլերենի քերականության և հնչյունաբանության ամբիոնի ավագ դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու Աննա Գասպարի Գասպարյանի դիմումը՝ նրան դոցենտի գիտական կոչում շնորհելու վերաբերյալ:

Քվեարկության համար գիտխորհրդի անդամներից ընտրվեց հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

Հ. Մադոյան - նախագահ
Ս. Մարգարյան - անդամ
Լ. Պողոսյան - անդամ

Գիտական խորհրդի 54 անդամներից ներկա էին 43-ը, որոնցից քվեարկեցին՝

«43» - կողմ, «0» - դեմ, անվավեր է ճանաչվել «0» քվեաթերթիկ:

Բաց քվեարկությամբ միաձայն հաստատեցին փակ /գաղտնի/ քվեարկության արդյունքները:

<u>ՈՐՈՇԵՑԻՆ</u> - 1. Հաստատել փակ /գաղտնի/ քվեարկության արդյունքները:

2. Հաշվի առնելով, որ անգլերենի քերականության և հնչյունաբանության ամբիոնի ավագ դասախոս, մանկավարժակա ն գիտությունների թեկնածու Աննա Գասպարի Գասպարյանի կատարած գիտամանկավարժական աշխատանքը համապատաս-խանում է ՀՀ Կառավարության 2001թ. հուլիսի 9-ի թիվ 615 «ՀՀ

գիտամանկավարժական կադրերի պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգ»-ի 5-րդ հոդվածի “բ” ենթակետին, մանկավարժական գիտությունների թեկնածու ***Աննա Գասպարի Գասպարյանին*** շնորհել դոցենտի գիտական կոչում «Մանկավարժություն» մասնագիտությամբ և ներկայացնել ՀՀ ԲՈՀ՝ հաստատելու ԵՊԼՀ-ի գիտական խորհրդի որոշումը:

*****

<u>ԼՍԵՑԻՆ</u> - Համալսարանի գիտքարտուղարի ժ/պ Հասմիկ Փիլավջյանին, ով գիտխորհրդի քննարկմանը ներկայացրեց կրթության կառավարման և պլանավորման ամբիոնի ավագ դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու Անուշ Արտուշի Շահվերդյանի դիմումը՝ նրան դոցենտի գիտական կոչում շնորհելու վերաբերյալ:

Քվեարկության համար գիտխորհրդի անդամներից ընտրվեց հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

Հ. Մադոյան	- նախագահ
Ս. Մարգարյան	- անդամ
Լ. Պողոսյան	- անդամ

Գիտական խորհրդի 54 անդամներից ներկա էին 43-ը, որոնցից քվեարկեցին՝

«41» - կողմ, «2» - դեմ, անվավեր է ճանաչվել «0» քվեաթերթիկ:

Բաց քվեարկությամբ միաձայն հաստատեցին փակ /գաղտնի/ քվեարկության արդյունքները:

<u>ՈՐՈՇԵՑԻՆ</u> - 1. Հաստատել փակ /գաղտնի/ քվեարկության արդյունքները:

2. Հաշվի առնելով, որ կրթության կառավարման և պլանավորման ամբիոնի ավագ դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու Անուշ Արտուշի Շահվերդյանի կատարած գիտամանկավարժական աշխատանքը համապատաս-խանում է ՀՀ Կառավարության 2001թ. հուլիսի 9-ի թիվ 615 «ՀՀ գիտամանկավարժական կադրերի պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգ»-ի 5-րդ հոդվածի “բ” ենթակետին, մանկավարժական գիտությունների թեկնածու ***Անուշ Արտուշի Շահվերդյանին*** շնորհել դոցենտի գիտական կոչում «Մանկավարժություն» մասնագիտությամբ և ներկայացնել ՀՀ ԲՈՀ՝ հաստատելու ԵՊԼՀ-ի գիտական խորհրդի որոշումը:

*****

<u>ԼՍԵՑԻՆ</u> - Համալսարանի գիտքարտուղարի ժ/պ Հասմիկ Փիլավջյանին, ով գիտխորհրդի քննարկմանը ներկայացրեց Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի ՅՈՒՆԵՍԿՕ-ի, մարդու իրավունքների, ժողովրդավարության և եվրոպագիտության ամբիոնի ավագ դասախոս, պատմական գիտությունների թեկնածու Գրիգոր Միխաելի Արշակյանի դիմումը՝ նրան դոցենտի գիտական կոչում շնորհելու վերաբերյալ:

Քվեարկության համար գիտխորհրդի անդամներից ընտրվեց հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

Հ. Մադոյան	- նախագահ
Ս. Մարգարյան	- անդամ
Լ. Պողոսյան	- անդամ

Գիտական խորհրդի 54 անդամներից ներկա էին 43-ը, որոնցից քվեարկեցին՝

«43» - կողմ, «0» - դեմ, անվավեր է ճանաչվել «0» քվեաթերթիկ:

Բաց քվեարկությամբ միաձայն հաստատեցին փակ /գաղտնի/ քվեարկության արդյունքները:

ՈՐՈՇԵՑԻՆ - 1. Հաստատել փակ /գաղտնի/ քվեարկության արդյունքները:

2. Հաշվի առնելով, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ի, մարդու իրավունքների, ժողովրդավարության և եվրոպագիտության ամբիոնի ավագ դասախոս, պատմական գիտությունների թեկնածու Գրիգոր Միխաելի Արշակյանի կատարած գիտամանկավարժական աշխատանքը համապատասխանում է ՀՀ Կառավարության 2001թ. հուլիսի 9-ի թիվ 615 «ՀՀ գիտամանկավարժական կադրերի պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգ»-ի 5-րդ հոդվածի “բ” ենթակետին, պատմական գիտությունների թեկնածու ***Գրիգոր Միխաելի Արշակյանին*** շնորհել դոցենտի գիտական կոչում «Պատմագիտություն» մասնագիտությամբ և ներկայացնել ՀՀ ԲՈՀ՝ հաստատելու ԵՊԼՀ-ի գիտական խորհրդի որոշումը:

*****

5. Ընթացիկ հարցեր.

Լսելով համալսարանի գիտքարտուղարի ժ/պ Հասմիկ Փիլավջյանի հաղորդումը բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Ելենա Հովհաննեսի Էթարյանին ԺԳ.00.07 «Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ դոկտորանտուրա ընդունելու վերաբերյալ՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2015/2016 ուսումնական տարվա ասպիրանտուրա ու դոկտորանտուրա ընդունելության տեղերը և առկա ուսուցմամբ ասպիրանտուրա ու դոկտորանտուրա ընդունելության տեղերի բաշխումը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 16 ապրիլի 2015 թվականի N 396-Ն որոշումը, ՀՀ ԿԳ նախարարի21.04.2015թ. թիվ 01/06.1/4336-15 գրությունը, ԵՊԼՀ համաշխարհային գրականության և մշակույթի ամբիոնի 10.06.2015թ. N 10 նիստի որոշումը՝ բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ *Ելենա Հովհաննեսի Էթարյանին* ընդունել ԵՊԼՀ առկա ուսուցմամբ դոկտորանտուրա՝ ԺԳ.00.07 «Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ: